Ազգ
Azg
6 ՓԵՏՐՈՒԱՐ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 12(5095)
ISSN: 1829-1651

# «Գորշ գայլերը» ստորագրահավաք են կազմակերպել՝ դատապարտելու Ղարաբաղի «հայկական օկուպացիան»

Ինչպես երեկ տեղեկացրել էր «Սոնսանիյե» կայքէջը, «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ Ազգայնական շարժում կուսակցության Յալովայի քաղաքային վարչությունը «Լեռնային Ղարաբաղի օկուպացիան դատապարտելու, վարչապետ Էրդողանի կառավարությանը վճռական քայլերի մղելու» առաջադրանքով ստորագրահավաք է նախաձեռնել:

Ահա թե ինչ է գրված ստորագրահավաքի ներկայացված տեքստում. «Ավելի քան 21 տարի օկուպացված է բուն թուրքական տարածք հանդիսացող եւ Ադրբեջանի մակերեւույթի 20 տոկոսը կազմող Լեռնային Ղարաբաղը: Քաղաքակիրթ աշխարհը քար լռությամբ շարունակում է անտեսել այս օկուպացիան: Ծպտուն չեն հանում նաեւ ՄԱԿ-ը, Եվրոմիությունն ու մահմեդական երկրները: ԵԱՀԿ-ն հեռու է հարցի կարգավորումից: Ինչո՞ւ են լռում արաբները, պարսիկները եւ մյուս մահմեդականները: Ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղում վարչապետ Էրդողանը հրաժարվում է ցուցաբերել այն հակազդեցությունը, ինչ ցուցաբերել է Պաղեստինի հարցում: Մենք՝ Ազգայնական շարժում կուսակցության Յալովայի վարչության անդամներս, անտարբեր չմնալու համար այս բռնությանը, ստորագրահավաք ենք նախաձեռնել: Ադրբեջանի թուրքերի հետ նույն արյուն կրողներն ենք, ունենք միեւնույն հոգին ու ոգին: Նրանց վիշտը մեր վիշտն է: Հավաքված ստորագրությունները ներկայացվելու են ՄԱԿ-ին ու Սպիտակ տանը»:

Հիրավի, թուրքերն ու ադրբեջանցիները միեւնույն հոգին ու ոգին ունեն: Մեկը հիանում եւ փառաբանում է մարդասպան Օգյուն Սամասթին, մյուսը՝ Ռամիլ Սաֆարով կոչված տականքին, կարծես ցույց տալու համար, որ նույնիսկ 21-րդ դարում չեն թոթափել հայատյացության անասնական բնազդը: Դա միանգամայն տրամաբանական է, որովհետեւ ոչ մի կերպ չեն կարողանում մարդ դառնալ:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# ՆԱՏՕ-ն մտնում է Ադրբեջան

## *Առայժմ այդ ցանկությունը միայն բարձրաձայնելով*




Երբ որոշ ժամանակ առաջ հայտնի դարձավ, որ Ադրբեջանն ու Ռուսաստանը չեն կարողացել համաձայնության գալ ադրբեջանական Գաբալայի ռադիոլոկացիոն կայանի վարձակալման գնի հարցում, ադրբեջանական պաշտոնյաներն ու աղբյուրները միաբերան հայտարարեցին, որ Ռուսաստանի փաստացի ռազմական դուրսբերումը Ադրբեջանից ամենեւին չի նշանակում, որ Ադրբեջանում կհայտնվեն այլ «օտարերկրյա ուժեր»: Սակայն երեկ ՆԱՏՕ-ի Հարավային Կովկասի հարցերով համակարգող Ուիլյամ Լահուան հայտարարել է. «Հյուսիսատլանտյան դաշինքը բանակցություններ է վարում Ադրբեջանի հետ՝ այդ երկրի տարածքն օգտագործելու համար Աֆղանստանից իր զորքերը դուրս բերելուց հետո»: Ավելին, ՆԱՏՕ-ի բարձրաստիճան պաշտոնյայի խոսքերով՝ «Ադրբեջանը կարող է կարեւոր օղակ հանդիսանալ Աֆղանստանից Եվրոպա զորքերի վերադարձի համար»:

Հիշեցնենք, որ օրեր առաջ Ադրբեջանում ԱՄՆ-ի դեսպան Մորնինգսթարը եւս հարցազրույցներից մեկում ընդգծեց Ադրբեջանի կարեւորությունը ԱՄՆ-ի համար, վերջինիս «տարածաշրջանային նպատակների ու ծրագրերի կենսագործման առումով»: Այս իրադարձությունների համատեքստում, «Ռոսբալտը» մեջբերում է որոշ փորձագետների, որոնց գնահատականով էլ՝ «Ադրբեջանը, որ Իսրայելի կողմից արդեն իսկ լավ սպառազինված է, չի մերժի ԱՄՆ-ին, որի նպատակը Իրանին հարվածելու համար պլացդարմի ստեղծման մասին է: Պենտագոնն ուղիղ ելք կունենա դեպի Կասպից ծով, այսինքն՝ նաեւ դեպի ռուսական Հյուսիսային Կովկաս»:

Ադրբեջանում իսրայելական, առավելաբար ռազմական ներկայացվածության մասին «**Ազգը**» բազմիցս է խոսել, Իրանին հարվածելու ոչ միայն «հարմար պլացդարմ» դառնալու, այլեւ հենց ինքնուրույն հարվածելու Բաքվի հեռահար նպատակների մասին, բնական է, որ ՆԱՏՕ-ի ու ադրբեջանական այս նպատակների համատեղելիությունից, Բաքուն առավելաբար կարեւորվելու է Արեւմուտքի համար, որը, չմոռանանք, հետաքրքրված է նաեւ Կասպից ծովի ռեսուրսներով: Մյուս կողմից, հիշեցնենք, որ օրեր առաջ ՌԴ ԱԳ նախարար **Սերգեյ Լավրովը** հայտարարեց. «Մոսկվան իհարկե կպատասխանի ԱՄՆ-ի ոչ բարեկամական քայլերին», որպես այդպիսին «**Ազգը**» իր հունվարի 22-ի համարում դիտարկել էր հենց Ադրբեջանի հարաբերությունների խորացումը ՆԱՏՕ-Իսրայել երկյակի հետ, ինչի ուղիղ ակնարկը, փաստորեն, հնչեցրեց Հարավային Կովկասի հարցերով ՆԱՏՕ-ի համակարգողը: Իսկ սա նշանակում է, որ Արեւմուտքը աչք կփակի այն հանգամանքի վրա, որ Իլհամ Ալիեւը երրորդ անընդմեջ նախագահությունը կստանձնի, որ Ադրբեջանում, Իսմայիլի շրջանում սովորական քաղաքացիների բողոքի ակցիան անվանվում է «խուլիգանական գործողություն», որ այս ու այլ նմանատիպ բազմաթիվ գործերով մի շարք ձերբակալվածներ կան, այդ թվում՝ ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչներ...

Ինչեւէ, սպասենք ՆԱՏՕ-ին՝ Ադրբեջանում, իսկ սա նշանակում է նաեւ, սպասենք Մոսկվայի պատասխան «ոչ բարեկամական քայլերին», որոնցից մեկը, ենթադրաբար, կարող է լինել ռուսական ներկայությունը՝ ընդհուպ Ղարաբաղում: Այսինքն հայ-ադրբեջանական հակամարտության խորացում:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Բաքվի «գործակալ»-ության հերթական պահը եկե՞լ է

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

**Անցած շաբաթավերջին Բաքվում մամուլի ասուլիս է անցկացրել «Աշխարհի ադրբեջանցիների կոնգրեսի» համանախագահ, Միլլի մեջլիսի պատգամավոր Սաբիր Ռուստամխանլին: Լրագրողներին նա ծանոթացրել է կառույցի վարչության՝ հունվարի 18-19-ին Ֆրանկֆուրտում անցկացրած նիստի արդյունքների մասին: Միջանկյալ նկատենք՝ զարմանալի չէ՞, որ «աշխարհի ադրբեջանցիների» հավաքատեղի է դարձել ոչ թե Բաքուն, այլ՝ գերմանական Ֆրանկֆուրտը: Իսկ այժմ՝ ըստ էության:**

**Ռուստամխանլին ասել է, որ վարչությունը «դիմել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունին, ԱՄՆ-ի նախագահ Օբամային, Վրաստանի վարչապետ Իվանիշվիլիին եւ միջազգային հանրությանը, ինչպես նաեւ հայտարարություն տարածել Ուրմիա լճի էկոլոգիական աղետալի վիճակի մասին»:**

*Տես էջ 8*

# Հրանտ Դինքի անունով կվերանվանվի Մալաթիայի փողոցներից մեկը

Ըստ Մալաթիայի քաղաքապետարանի որոշման՝ Հրանտ Դինքի անունով կվերանվանվի այն փողոցը, որտեղ ծնվել է Ստամբուլում լույս տեսնող «Ակօս» պարբերականի նախկին գլխավոր խմբագիրը: Այս մասին տեղեկացրել է Մալաթիայի քաղաքապետ **Ահմեդ Չաքըրը**: Քաղաքապետը նշել է, որ Մալաթիայի շատ փողոցներ կրում են նույն անվանումը, եւ ընդգծել է, որ որոշ փողոցներ անվանափոխելու որոշում ընդունելիս մեծ ուշադրություն են դարձրել այն փաստին, թե ինչ ներդրում են ունեցել քաղաքականության կամ արվեստի մեջ Մալաթիայում ծնված մարդիկ, ովքեր, սակայն, ինչ-ինչ պատճառով զոհվել են: Չաքըրը նշել է, որ որոշում է կայացվել 2007 թվականին սպանված Հրանտ Դինքի անունով կոչել Չավուշօղլու թաղամասում գտնվող այն փողոցը, որտեղ ծնվել է հայազգի խմբագիրը:

# Որդուս «տեսել եմ միայն ապակու հետեւից»



«Առաջիկայում ուզում եմ ընտանիքիս հետ լինել, կարոտել եմ, 4,5 տարին քիչ ժամանակ չէ, որդիս առանց հոր է մեծացել», «Հարավային դարպաս» օնլայն պարբերականին տված հարցազրույցում իր առաջիկա ծրագրերի մասին այսպես է նշել «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքի առաջնորդ, համաներմամբ ազատ արձակված **Վահագն Չախալյանը**:

Չախալյանն առողջական խնդիրներ ունի, ուզում է հետազոտվել, գուցե լուրջ բուժման կամ վիրահատական միջամտության կարիք կա: «Հիմա հույս ունեմ արդար դատավարության, հոգեբանորեն շատ կարեւոր է մեզ համար, որ արդարությունը վերականգնվի, որ նման սեւ կետեր մեր 2 ժողովուրդների միջեւ չլինեն», նշել է նախկին քաղբանտարկյալը:

Խոսելով կալանավայրում իր վիճակից՝ Չախալյանը նշել է, որ հույսը ոչ մի օր չի կորցրել: «Չեմ մտածել՝ այսօր դուրս կգամ, թե 10 տարի հետո»: Բայց խոշտանգումներ են եղել, ավելի շատ՝ հոգեբանական ճնշումների ձեւով: «Երբեք մենակ չեմ եղել: Ավելի լավ է՝ խփեին: Ամբողջ օրը, փաստորեն քեզ մատով չեն կպչում, բայց այնպիսի մի վատ իրավիճակ են ստեղծում, որ քեզ համար անտանելի է դառնում: Ճաշիս մեջ երեւի դեղ էին լցնում, չգիտեմ՝ ահավոր մի զգացում կար, հիշողությունս էի կորցրել, կարճ ասած՝ սարսափելի մի բան»:

*Տես էջ 3*

# Առասպելացած Հայրիկյանն ու առասպելական մահափորձը

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ




Այն, ինչ երեկ կատարվեց «Երեւան» հյուրանոցում, հիշեցնում էր վատ բեմադրված մեկ գործողությամբ եւ մեկ անձով ներկայացում: Ռեժիսորը Պարույր Հայրիկյանն էր, գլխավոր դերում՝ նույնպես: Հյուրանոցի վարձակալած միջոցառումների դահլիճը լեփ-լեցուն էր. ներկա էին ոչ միայն լրատվամիջոցների տասնյակ ներկայացուցիչներ, այլեւ Հայրիկյանի բազմաթիվ համակիրներ, ներկայացուցիչներ միջազգային կազմակերպություններից, դիտորդներ:

Հայրիկյանի ընկեր, նրա շտաբի արտաքին կապերի պատասխանատու **Կարո Եղնուկյանը** հայտարարեց, որ մահափորձից հետո թեկնածուի վարկանիշի մեջ որեւէ շարժ չի գրանցվել: «Հայրիկյանի վարկանիշը չի բարձրացել», հայտարարեց Եղնուկյանը՝ հավելելով, որ երբ նախագահի թեկնածուն երեւում է հիվանդանոցում, ստեղծում է բացասական իմիջ:

«Թե ինչպե՞ս ստացվեց, որ մահափորձից մեկ օր անց Հայրիկյանն արդեն հարցազրույցներ էր տալիս, շփվում լրագրողների եւ քաղաքական գործիչների հետ, երբ անգամ գրիպի դեպքում մարդիկ դժվարանում են խոսել, Եղնուկյանն ասաց, որ այդ առումով Հայրիկյանն առասպելային կերպար է:

«Անկախությունից ի վեր սա 5-րդ դեպքն է, երբ նրա դեմ մահափորձ են կատարում: Եթե կատուների կյանքով ենք հաշվում, մնացել է չորս կյանք Հայրիկյանին», հստակեցրեց Եղնուկյանը:

Քանի դեռ ոճրագործը չի հայտնաբերվել, Հայրիկյանը թիկնապահների ծառայությունից չի հրաժարվի: Սա թեկնածուի կամքն է, շտաբում այն ընդունում են, հարգում:

*Տես էջ 2*

# Սպա հոգեբանների շնորհիվ ազդել բանակում ինքնասպանությունների վիճակագրության վրա

107 կողմ, 1 դեմ եւ 3 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ Ազգային ժողովն ընդունել է «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու օրենքի նախագիծը: Համաձայն նախագծի` զինված ուժերում կսպասվի համալրում: Հոգեբանության բնագավառում բարձրագույն կրթություն ունեցող անձանց կշնորհվի սպայի կոչում: Նախագիծը խորհրդարանում ներկայացնելիս պաշտպանության փոխնախարար **Արա Նազարյանը** նշել է, որ սպա հոգեբանի անհրաժեշտություն զգացվում է ՀՀ ԶՈւ յուրաքանչյուր գնդում, հետեւաբար ողջամիտ ժամկետներում այն պետք է համալրվի համապատասխան մասնագետներով: Մինչ օրենքի նախագիծ ներկայացնելը նախարարությունում ուսումնասիրել են տարբեր երկրների փորձը, սակայն նախապատվություն տվել են մեր իրականությանն ու մենթալիտետին:

Համաձայն նախագծի` գնդի սպա հոգեբանը խաղաղ եւ պատերազմական ժամանակ պատասխանատու է գնդում հոգեբանական աշխատանքի կազմակերպման, անձնակազմի հոգեբանական վիճակի եւ դրա «պահպանմանն ուղղված աշխատանքների համար»: Սպա հոգեբանը ենթարկվում է գնդի հրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալին, ղեկավարում է զորամասի հոգեբանական օգնության եւ վերականգնողական կետի աշխատանքները: Սպա հոգեբանը պարտավոր է իմանալ գնդի յուրաքանչյուր սպայի եւ ենթասպայի հոգեբանական նկարագիրը, կազմել եւ գնդի հրամանատարի` սոցիալ-իրավական աշխատանքների գծով օգնական սպայի հետ մշտապես ճշտել գնդի սոցիալ-հոգեբանական բնութագիրը, ուշադրության կենտրոնում պահել առանձին ստորաբաժանումների բոլոր զինծառայողներին ընդհանրապես եւ մասնավորապես` այն զինծառայողներին, որոնց նկատմամբ պահանջվում է հոգեբանական եւ մանկավարժական հատուկ ուշադրություն:

Հոգեբան սպայի գործառույթների մեջ է մտնում նաեւ գնդի զինծառայողների սոցիալ-հոգեբանական գործընթացների ուսումնասիրությունների անցկացումը: Պաշտպանության նախարարությունում համոզված են, որ այս հաստիքի համալրումով կկարողանան ազդել բանակում ինքնասպանությունների վիճակագրության վրա: Ռազմական փորձագետների գնահատմամբ` զինվորները հաճախ խոսելու, արտահայտվելու կարիք են զգում, եւ շատ հաճախ ինքնասպանության դիմող անձը մինչ կյանքին վերջ տալը գուցե զրուցի հոգեբանի հետ, եւ հնարավոր լինի կանխել ողբերգությունը:

ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ **Կորյուն Նահապետյանը**, կարեւորելով սպա հոգեբանի հաստիքի առկայությունը, ելույթում շեշտեց, որ եթե քաղաքացիական կյանքում հոգեբանի աջակցությունը մեծ դեր ունի, ապա էլ ավելի կարեւոր է զինծառայողների դեպքում:

Հ. Հ.

# Առաստելացած Հայրիկյանն ու առաստելացած մահափորձը

*1-ին էջից*

Շտաբում նաեւ հասկանում են, որ Հայրիկյանի դեմ կատարվածն անհաղթահարելի խոչընդոտ է, սակայն իրենք չեն ցանկանում այն շահարկել: Երկար սպասված հարցը` կապված ընտրությունների հետաձգման հետ, ունի պատասխան, Հայրիկյանը որոշել է, դրանք չեն հետաձգվում, նախագահի ընտրությունները փետրվարի 18-ին են:

Սակայն իրենք չեն արգելում մյուս թեկնածուներին` հետաձգելու համար որոշում կայացնել եւ իրենց անելիքն անել: «Մենք հետեւաբար դուռը բաց ենք թողնում իրենց համար, որպեսզի իրենք ներկայացնեն իրենց տեսակետները, եթե ուզում են միասնական մոտեցումով բանակցել, մենք պատրաստ ենք», ասաց **Եղնուկյանը**, թերեւս առաջին հերթին նկատի ունենալով նախագահի մեկ այլ թեկնածու, էպոսագետ Վարդան Սեդրակյանին, որը հայտարարել էր, որ Հայրիկյանն ինքն իր դեմ է մահափորձ կազմակերպել, ու եթե մյուս թեկնածուները նման քայլերի են գնում, ինքն էլ կգնա իր Range Rover մակնիշի մեքենան վառելու ճանապարհով:

Հենց այսօրվանից Հայրիկյանը պատրաստ է վերսկսել քարոզարշավը: Սակայն մինչ քարոզարշավը` Հայրիկյան անսպասելիորեն «Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնից հայտնվեց մամուլի սրահում, եւ սկսվեց ամենահետաքրքրականը: Թեկնածուի համակիրները ոտքի կանգնեցին եւ սկսեցին ծափահարել, իսկ միջազգային դիտորդները զարմացած հարցնում էին` ինչ է կատարվում, ի՞նչ եղավ: Այդ պահին կատարյալ իրավիճակի ամբողջացման համար բացակայում էին միայն կարմիր գորգն ու «Օսկար»-ի արձանիկը:



Հայրիկյանը զարմացած հանդիսատեսին բարեւեց, շնորհակալություն հայտնեց, որ իր կողքին է եղել, ասաց, որ չի պատրաստվում խոսել եւ հարցերին պատասխանել, բայց հետո երեւի զղջաց ու ելույթ ունեցավ:

«Ներկա եմ, ոչ թե քաղաքական դաշտում, այլ` ֆիզիկապես: Թող բոլորն իմանան, որ որեւէ ահաբեկչություն հայ քաղաքական կյանքն իր ուղուց չպետք է շեղի, եւ ամեն մեկս անելիք ունենք: Այդ ահաբեկչությամբ զբաղվել են տասնամյակներ ու առաջին օրը չէ, որ ինձ փորձել են սպանել: Բայց երբեք չի հաջողվել ինձ սպանել, այլ փորձել են սպանել այն արժեքները, որոնք ես դարձրել եմ ժողովրդի սեփականությունը` ժողովրդավարություն, անկախություն, ինքնորոշում, մարդու իրավունք»:

Իրեն քննադատող կամ չարախոսող նախագահի թեկնածուներին Հայրիկյանը չի պատասխանում, միայն խորհուրդ է տալիս համեմատել, թե նույն տարիքում իրենք ինչո՞վ էին զբաղված, Հայրիկյանն` ինչո՞վ: «Թող վերցնեն` 20 տարեկան ինքը, 20 տարեկան Հայրիկյանը եւ այդպես շարունակ, հետո միայն հիմարություններ դուրս տան», ասաց նախագահի թեկնածուն` հավելելով, որ տերն է իր կյանքը փրկել, հրեշտակներն են օգնել, քանի որ նա դեռ Երկրի վրա գործեր ունի անելու:

Հայրիկյանը վստահ է` իր վրա կրակել են ոչ թե ներսի ուժերը, այլ դրսի` ռուսական իմպերիալիզմը: Հայրիկյանը դեմ չէ հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդմանը, ավելին, նա վստահ է, որ 50 տարի անց Հայաստանն ու Ռուսաստանը լինելու են Եվրոմիության անդամ, հենց դա է պատճառը, որ նա ոչ թե Ռուսաստանին է մեղադրում, այլ ռուսական իմպերիալիզմին: Ինչ վերաբերում է ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժայի հայտարարությանը, թե դեռ պետք է ապացուցվի, որ Հայրիկյանի դեմ կատարվածը մահափորձ է, նախագահի թեկնածուն զայրացած հավելեց, որ եթե Բորդյուժան ինչ-որ բան գիտե, ապա թող հայտնի նախաքննական մարմնին կամ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանին:

ՀԱՄԱՌՈՏ

# Դալմայի հողագործները կրկին դիմում են երկրի նախագահին

Երեւանի Դալմայի այգու վարձակալների անունից նախագահ Սերժ Սարգսյանին եւ քաղաքապետ Տարոն Մարգարյանին դիմել է Երեւանի բնակիչ, Դալմայի վարձակալ **Անդրանիկ Վիրաբյանը**: Կարեւորելով նախագահի աջակցությունն իրենց «արհամարված իրավունքներին զորավիգ լինելու եւ արդարացի լուծումներ տալու գործում», նա նշում է, որ վերջին տարիներին Դալմայի այգիների հողերի վարձակալների բազմաթիվ դիմումները` երկրի նախագահին, վարչապետին եւ Երեւանի քաղաքապետին, հայտնվում են իրենց նկատմամբ անօրինականություններ գործողների մոտ:

Անդրանիկ Վիրաբյանը դժգոհում է ՀՀ նախագահի աշխատակազմի բաժնի պետ Աիդա Ասատրյանից, որը սպառնացել է դատի տալ նրան: Մինչդեռ ինքը բավարարված չէ առաջարկվող լուծումներով: Մասնավորապես խոսքը փոխհատուցման գումարի մասին է: Նախապես առաջարկվել էր 5 դոլար 1 քմ դիմաց, ապա 7-8 դոլար, ինչը Դալմայի հողագործները համարում են անարդարացի:

«Համոզված եմ, որ Ձեր արդար եւ իրավաչափ ձեռնարկած միջոցները կնպաստեն արծարծած հարցի լուծմանն ու դառը հիշողություններ կպարգեւեն թերացողներին», ասված է նախագահին ուղղված Անդրանիկ Վիրաբյանի դիմումում:

Ա. Մ.

# Գյումրիում մեքենան կամրջից ընկել է ձորը

Երեկ, կեսօրին մոտ, արտակարգ պատահար է տեղի ունեցել Գյումրիում: «Նիվա» մակնիշի 90 OL 202 համարանիշով ավտոմեքենան, Ալեք Մանուկյան փողոցի կամրջի վրա կորցնելով կառավարումը եւ դուրս գալով երթեւեկելի գոտուց, բախվել է կամրջի արգելապատնեշին ու կոտրելով այն, մոտ 10-15 մետր բարձրությունից գլխիվայր ընկել ձորը: Բարեբախտաբար մարդկային զոհեր չեն եղել, իսկ վարորդ Գրիշա Գասպարյանը (ծնվ. 1989 թ.) եւ մեքենայում եղած միակ ուղեւոր Մուկուչ Տեր-Ավագյանը (ծնվ. 1981 թ.) տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Գյումրու բժշկական կենտրոն: Բժիշկները նրանց վիճակը գնահատել են միջին ծանրության:

Դեպքի վայրում աշխատել են հրշեջ-փրկարարները, ոստիկանության, շտապօգնության եւ այլ ծառայությունների աշխատակիցները: Կամրջի մի կողմում երթեւեկությունը ժամանակավորապես դադարեցված է եղել: Ժամը մոտավորապես 13.50-ին մեքենան վերամբարձ տեխնիկայի օգնությամբ դուրս է բերվել ձորից:

Գ. Մ.

# Հայաստանի տարածքի ճշգրիտ օդալուսանկարահանում եւ օրթոլուսանկարում

## *Կիրականացվի նորվեգական դրամաշնորհի միջոցներով*

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Երվանդ Զախարյանը եւ Նորվեգիայի Թագավորության քարտեզագրության եւ կադաստրի գերատեսչության գույքային իրավունքների եւ զարգացման կենտրոնի տնօրեն Հելգե Օնսրուդը երեկ ստորագրեցին «Հողային ռեսուրսների կայուն կառավարման գործիքներ» նոր դրամաշնորհային ծրագրի պայմանագիրը: Համաձայն պայմանագրի, նախատեսում է 9,8 մլն նորվեգական կրոն (1 մլն 750 հազար դոլար) դրամաշնորհ տրամադրել Հայաստանին, որը նախատեսվում է իրագործել 2,5 տարվա ընթացքում:

Դրամաշնորհային ծրագրի նպատակներն են` Հայաստանում մշտական գործող ՋիՊիէս (GPS) ռեֆերենց կայանների ցանցի ստեղծումը, Հայաստանի զգալի տարածքի օդային լուսանկարահանումը եւ օրթոլուսանկարների պատրաստումը:

Ծրագրի առաջին փուլում նախատեսվում է ձեռք բերել 12 ռեֆերենց կայաններ (Երեւանում, Գյումրիում, Վարդենիսում, Ալավերդիում, Թալինում, Գավառում, Վայքում, Ագարակում, Գորիսում, Իջեւանում, Դիլիջանում, Ուրցալանջում), որոնք կձեւավորեն Հայաստանի դիրքորոշման համակարգը (ARMPOS), որը կապակցված կլինի Ազգային գեոդեզիական ցանցի կետերին: Վերջինս նախատեսվում է կապակցել նաեւ Եվրոպական դիրքորոշման համակարգին (EUPOS): Կայանների աշխատանքը կվերահսկվի Երեւան քաղաքում տեղակայված կենտրոնից: Դրանք հնարավորություն կընձեռեն բարձր ճշտությամբ որոշելու տեղադիրքը հանրապետության ողջ տարածքում: Կիրառության ոլորտներն են` գյուղատնտեսություն, ճանապարհաշինություն, բարձր ճշտության ինժեներական աշխատանքներ, սեյսմիկ դիտարկումներ, ռազմատեղագրական քարտեզագրություն, տրանսպորտ, նավիգացիա, կադաստրային, տեղագրական քարտեզագրություն եւ այլն: Առաջին փուլի աշխատանքները նախատեսվում է ավարտել 2013-ի դեկտեմբերին:

Ծրագրի այս փուլում նախատեսվում է հանրապետության զգալի տարածքի օդային լուսանկարահանումը, այդ թվում` 300-500 ք կմ քաղաքային (10սմ ճշտության) եւ 10000-12000 գյուղական (20 սմ ճշտության) բնակավայրերի օրթոլուսանկարների պատրաստում: Ստացված լուսանկարների համապատասխան մշակումից ստացված օրթոլուսանկարները կծառայեն առկա քարտեզների ճշգրտման եւ նոր քարտեզների ստեղծման համար: Ելնելով ընդունված չափանիշներից եւ եղանակային առանձնահատկություններից` թռիչքները նախատեսվում է իրականացնել 2014-ի գարնանը: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2015-ի առաջին եռամսյակում:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

ԱԶԳ **Անցուդարձ**

# Ջերմություն հայ-վրացական հարաբերություններում

Խորհրդային ժամանակաշրջանում հայ-վրացական հարաբերությունները այլ կերպ չէին կարող լինել, քան այն, որ տարածաշրջանի համար նախատեսել էին Կրեմլի իշխանավորները: Բայց վրդովմունքի չդրսեւորված միտումները շարունակեցին խորանալ մի շարք պատճառներով: Դարեր շարունակ հայերը ներկայացնում էին Վրաստանի էլիտար խավը բիզնեսի բնագավառում: Նրանք նաեւ կառուցեցին մայրաքաղաք Թբիլիսին, որը բոլշեւիկյան հեղափոխությունից առաջ «Կովկասի Փարիզը» անվանումն էր ստացել: Երբ 1917-ի հեղափոխությունը հասավ նաեւ այդ տարածաշրջան, վրացիները, օգտվելով առիթից, բուրժուազիայի ձեռքից հարստությունը պրոլետարիատին հանձնելու քողի ներքո խլեցին հայերի ունեցվածքն ու յուրացրին:

Խորհրդային ամբողջ ժամանակահատվածում Վրաստանի կառավարությունը Ջավախքի հանդեպ կիրառեց գրեթե միեւնույն քաղաքականությունը, ինչ Ադրբեջանի կառավարությունը կիրառում էր Ղարաբաղում, այսինքն՝ զարկ չտվեց շրջանի զարգացմանը: Ջավախահայության ներկայիս ոչ բարվոք կարգավիճակը հետեւանքն է այդ խտրական քաղաքականության: Խորհրդային կայսրության անկումից հետո երկկողմ վրդովմունքները ջրի երես դուրս եկան:

Շեւարդնաձեի, Գամսախուրդիայի եւ Սաակաշվիլու հաջորդական կառավարությունները սկսեցին իրագործել հայկական շրջանները հայաթափելու քաղաքականությունը: Ավելին, նրանք սպառնացին Կենտրոնական Ասիայից աքսորյալ մեսխեթյան թուրքերին վերաբնակեցնել Ջավախքում: Դա երկսայր քաղաքականություն էր, որի նպատակն էր մի կողմից հաճոյանալ թուրքերին՝ Անկարայում եւ Բաքվում, մյուս կողմից՝ ահաբեկել բնիկ հայերին: Մոտավորապես 200 հազար հայեր արտագաղթեցին Վրաստանից երկրի անկախացումից հետո:

Արդարացի լինելու համար նշենք, որ արտագաղթը միայն այդ քաղաքականության հետեւանքը չէր, քանի որ արտագաղթ տեղի ունեցավ նաեւ Հայաստանից: Չնայած Վրաստանի խորհրդարանում հինգ հայ պատգամավոր կա, նրանց կշիռը մեծ չէ: Նրանք անտարբեր են տեղի հայկական համայնքի կարիքների նկատմամբ, օսմանյան շրջանի ամիրաների նման, որոնք իրենց մասին էին միայն մտածում:

Չնայած Վրաստանն ու Հայաստանը Կովկասյան տարածաշրջանում երկու քրիստոնյա պետություններն են, նրանց հարաբերությունները, մեղմ ասած, սառն են եղել: Վրաստանը դեռեւս չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը եւ ՄԱԿ-ում համառորեն քվեարկել է հօգուտ Ադրբեջանի:

Շարունակվող սառը պատերազմը նույնպես իր ազդեցությունն է թողել տարածաշրջանի վրա: Ինչքան որ Հայաստանն է համարվում Կովկասում Ռուսաստանի առաջավոր հենարանը, այնքան էլ Վրաստանն է համարվում Կովկասում ՆԱՏՕ-ի առաջավոր հենարանը՝ նույնիսկ եթե դա վիրտուալ է: Անմիջական օժանդակությունների եւ ներդրումների միջոցով Եվրոմիությունն ու Մ. Նահանգները փորձել են Վրաստանը դարձնել ցուցադրական առումով տիպիկ արեւմտյան երկիր, եւ Մ. Նահանգներում վերապատրաստված Սաակաշվիլին, ճիշտ է, կարողացել է նախկին խորհրդային հանրապետություններին բնորոշ կոռուպցիային վերջ դնել, այդուհանդերձ, վերջին սկանդալները ցույց են տալիս, որ այդ բոլոր բարեփոխումները կատարվել են ի գին բավական կոշտ ու ճնշիչ միջոցների: Այդ սկանդալներից ամենամեծն այն էր, որ Սաակաշվիլին զիջեց իր դիրքերը խորհրդարանական ընտրություններում, եւ միլիարդատեր Իվանիշվիլին դարձավ երկրի վարչապետը:

Երկու առաջնորդների համատեղ գործունեությունը տեղի տվեց որոշակի լարվածության, հատկապես այն բանից հետո, երբ նորանշանակ վարչապետը արշավանք սկսեց ընդդեմ նախագահի կողմնակիցների: Այդ ընթացքում երկրի հոգեւոր առաջնորդ՝ պատրիարք Իլյա Բ-ն դիրքափոխվելով սկսեց պաշտպանել հաղթական կողմին՝ Իվանիշվիլու «Վրացական երազանք» կուսակցությանը: Իվանիշվիլին Հայաստանի Հանրապետության հետ իր արտաքին քաղաքականությունը սկսեց սխալ քայլով, բայց հետագայում փորձեց ուղղել իր սխալը:

Վերջերս Հայաստան կատարած նրա այցելությունը նշանակալի ջերմություն մտցրեց երկու երկրների հարաբերությունների մեջ: Նրա կողմից խորհրդանշական քայլ համարվեց քաղբանտարկյալ Վահագն Չախալյանի ազատ արձակումը: Ավելի առաջ գնալով՝ Իվանիշվիլին նաեւ քննարկեց աբխազական երկաթգծի հնարավոր վերագործարկումը, որը մեծապես կնպաստի Հայաստանի տնտեսությանը եւ Ռուսաստանին կօժանդակի ապրանքներ տեղափոխել տարածաշրջան:

Գաղափարն, անշուշտ, ամբողջովին հակադրվում է նախկին վարչակարգի դիրքորոշմանը, որը ոչ մի գործ չի ցանկանում ունենալ Աբխազիայի հետ, քանի դեռ այն գտնվում է Թբիլիսիի իրավասությունից դուրս: Զարմանալի չէր, հետեւապես, լսել Սաակաշվիլու հակազդեցությունը: Նա նաեւ աղմուկ բարձրացրեց Չախալյանի ազատ արձակման առնչությամբ:

Նորանշանակ վարչապետը, մյուս կողմից, գովաբանեց վրացահայերին երկրին ցուցաբերած իրենց հավատարմության համար եւ ասաց, որ Վրաստանում ապրում են 300 հազար հայեր, որոնց քվեների վրա է իր հույսը դնում առաջիկա ընտրությունների ժամանակ:

Նախագահ Սաակաշվիլուց բացի՝ Վրաստանի արտգործնախարարը նույնպես թշնամական ակնարկով հանդես եկավ, մինչ իր գերադասը դեռեւս Երեւանում էր գտնվում: Նա ասաց, որ Վրաստանը Ղարաբաղի հարցի լուծումը տեսնում է լոկ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը պահպանելու շրջանակներում:

Վրաստանը բավականին խճճված հարաբերություններ է զարգացրել Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ: Առաջինը էժան գազ է մատակարարում նրան, իսկ երկրորդը՝ մեծ ներդրումներ է կատարել Վրաստանում: Այնպես որ, հեշտ չի լինելու Թբիլիսիին «ձերբազատել» այդ երկու պետություններից, ինչքան էլ նոր կառավարության առաջնորդը փորձի բարելավել հարաբերությունները Մոսկվայի հետ:

Վրաստանի եւ Հայաստանի հարաբերությունները միշտ չէ, որ ջերմ են եղել, բայց 2008-ի օգոստոսից ի վեր դրանք էլ ավելի են բորբոքված, քանի որ Թբիլիսիում համոզված են, որ Երեւանն է Կովկասում ռուսական ազդեցության հենակետը: Այդ պատճառով էլ Իվանիշվիլու Հայաստան այցելությունը մեկնաբանվեց որպես Ռուսաստանի հետ մերձեցման հնարավոր եզրեր որոնելու փորձ:

Վրաստանը կենսական կապօղակ է Հայաստանի արտաքին առեւտրի համար, քանի որ ապրանքների ցամաքային փոխադրման 70 տոկոսը կատարվում է Վրաստանի տարածքով: Սակայն ճանապարհատրանսպորտային համակարգը դեռեւս մնում է անհուսալի՝ հաշվի առնելով, որ տարվա մեջ մի քանի ամիս ճանապարհները ձյան պատճառով անանցանելի են դառնում՝ հատկապես Վերին Լարսի տարածքում: Լեռների միջով բավականին թանկ թունել կառուցելու նախագիծը դեռեւս թղթի վրա է, բայց հենց վրացական իշխանությունները գիտակցեն դրա շահավետությունը, կարող են իրականացնել, եւ Հայաստանը կդառնա դրանից անմիջական օգտվողը:

Առայժմ երկու երկրների միջեւ բնականոն հարաբերություններ հաստատելու մոտեցումները զգուշավոր են: Ինչքան էլ Իվանիշվիլին լուրջ լինի իր մտադրություններում, նա դեռեւս Վրաստանում դիրքերն ամրապնդելու խնդիր ունի: Նա կարող է արկածախնդրական քաղաքական կուրս հետապնդել միայն այն դեպքում, երբ երկրում իշխանության ղեկն ամբողջովին վերցնի իր ձեռքը:

Տարածաշրջանում այս օրերին հնչեղություն ստացած մյուս հարցը Ստեփանակերտի օդանավակայանի բացման խնդիրն է, որին վճռականորեն դեմ է Ադրբեջանը: Հայաստանը չի կարող ռիսկի դիմել եւ գործարկել օդանավակայանը, քանի որ Եվրոմիության որոշ անդամներ այդ քայլը կարող են «սադրանք» համարել: Բայց եթե Ռուսաստանը որոշի, որ իրանական սահմանին կից ռազմավարական մի զինակից վտանգի տակ է, նա կարող է Ղարաբաղին միանալով կասեցնել սպառնալիքը, հատկապես ներկա իրավիճակում, երբ դադարեցվել է Գաբալայի կայանի օգտագործումը:

Տնտեսական եւ ռազմական բազում ճնշումներից հետո Հայաստանը արժանի է հարաբերական որոշակի անդորրի: Եթե վրացիները ճիշտ ուղղությամբ շարժվեն, նրանց այդ քայլը անկասկած հօգուտ իրենց է լինելու, բայց դրանից, ինչ խոսք, շահելու է նաեւ Հայաստանը:

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**
Դետրոյթ, ԱՄՆ
Թարգմ.՝ Հ. Ծ.

ՊԱՏՄՈՒՄ Է ԻՐԱՆՑԻ ԳՈՐԾԱԿԻՑՍ

# Հայերին քշելուց հետո Ադրբեջանում թառ սարքող վարպետ չի մնացել

**Գործակիցներիցս մեկը, որ լարային գործիքների վարպետ նվագող է ու նաեւ հրաշալի ճարտարապետ, մի օր եկավ մոտս եւ պատմեց հետեւյալը:**

**Իրեն ծանոթ ուրմիացի թառիստ բարեկամներից մեկը երկու-երեք շաբաթով գնացել էր Բաքու եւ մտածել, Սովետի ժամանակների նման, երբ այցի էր գնացել բարեկամներին եւ շատ լավ արժեքով մի հրաշալի թառ էր գնել Բաքվում եւ Իրան էր տարել իր հետ, հիմա էլ անսովետացած Բաքվում մի կարգին թառ կգնի եւ, պարծենալով բաքվեցի վարպետների գործով ու արվեստով, իր հարազատ քաղաքը՝ Ուրմիա կտանի:**

**Երկար-բարակ հարցուփորձ էր արել, երաժիշտների եւ նվագարաններ վաճառողների էր դիմել, գումարներ էր խոստացել, «բարձրաստիճան ծանոթների» միջամտությունն էր հայցել...**

**Չէր ստացվել:**

**Զարմանալիորեն նման հրաշալի նվագարանները ամբողջովին անհետացել էին Բաքվից եւ ամբողջ Ադրբեջանից: Եվ երբ հետաքրքրվել էր իրանցի թառիստը, ամեն տեղ նրան նույնն բացատրությունն էին տվել: Հրաշալի նվագարաններն ու սազերը անհետացել են Բաքվից եւ ամբողջ Ադրբեջանից իրենց հրաշագործ-արարող վարպետների հետ: Այն օրվանից, երբ կոտորել եւ իրենց տուններից քշել են հայերին, բռնագրավել նրանց տներն ու արհեստանոցները, այլեւ ոչ մի երաժշտական գործիք չի պատրաստվել այդ երկրում:**

**Ափսոս: Տեսնես, այդ հրաշագործ վարպետները հիմա ո՞ւր են, ո՞րը ողջ, ո՞րը սպանված...**

**Եվ նրանց արարած սազերն ու թառերը հիմա ո՞ր ադրբեջանցի երաժշտի ձեռքում են կարոտում իրենց արարչին ու...**




**ԽԱՉԻԿ ԽԱՉԵՐ**
Մումբայ, Հնդկաստան

# Որդուս «տեսել եմ միայն ապակու հետեւից»

*1-ին էջից*

**«Երբ գիտես՝ քո խցում թաքուն տեսախցիկ կա, ձայնագրում են, քո ամեն շարժմանը հետեւում են, անգամ զուգարանում: Երբ դու ինչ-որ մի աչքի 24-ժամյա հսկողության տակ ես, միայն սա սպանիչ է», հիշել է Վահագն Չախալյանը: «Նույն պարապմունքը (մարմնամարզություն), որ բոլորին կարելի էր, ինձ՝ չէ: Գանտելները, որ սարքում էի պարապելու համար, ներս էին լցվում՝ տանում ամեն ինչ եւ բանտային կարգի խախտում համարում, ասենք, մի շաբաթ զրկում էին հեռախոսից կամ խանութից օգտվելուց: Հարվածը հեշտ է, այդ պահին կա, իսկ հետո արդեն՝ չէ»:**

**Նրա խոսքերով, ճնշում է, երբ չեն թողնում որդու հետ հանդիպել, 4,5 տարվա մեջ գրկել. «Տեսել եմ միայն ապակու հետեւից»:**

**Իրեն ուղղված մեղադրանքների առումով էլ Չախալյանը հակադարձում է. «Անջատողականը երբեք ընտրությունների չի մասնակցում: Անջատողականը ոնց կարող է ցանկություն հայտնել դառնալու խորհրդարանի պատգամավոր: Այսինքն՝ անջատողականության մասին խոսք գնալ չի կարող: Մենք մեր առջեւ խնդիր էինք դրել Վրաստանի սահմանադրության սահմաններում հասնել մեր խնդիրների լուծմանը: Մեր նպատակն էր մտնել ազգային ժողով եւ այնտեղից բարձրացնել մեզ հուզող հարցերը, դա չի նշանակում, որ մենք անջատողական ենք: Անջատողականը կբարձրանար սար, սարից լեռ եւ այնտեղից կասեր, որ մեր պահանջը դա է: Վրաստանի նախորդ իշխանությունների մեթոդներից մեկն էր դա: Նրանք չտեսնելու էին տալիս այստեղի խնդիրները, իսկ նույնիսկ փոքր բողոքի ակցիա մեկնաբանում որպես անջատողականություն՝ սեփական ժողովրդին եւ միջազգային հանրությանը խաբելու համար: Նրանց դա շատ լավ հաջողվում էր մինչեւ իմ ձերբակալությունը»:**

**Ձերբակալությունից հետո էլ, ըստ Չախալյանի, հնարավոր եղավ լուրջ աշխատանք տանել միջազգային կառույցներում, բայց ոչ Վրաստանում. «Վրաստանում չկարողացանք աշխատանք տանել, որովհետեւ «բլակիրովկա» էր արված «ազգայինների» կողմից, որ ոչ մի լրատվամիջոց, կոռեկտ ասեմ, չէր հետաքրքրվում մեր թեմայով, ոնց որ մի անտես ձեռք թույլ չէր տալիս անդրադառնալ մեզ, միայն վերջին 2 ամիսների ընթացքում սկսեցին հետաքրքրվել»:**

**Մի կողմից՝ ազգային հերոս, մյուս կողմից՝ «Վրաստանի պետականության թշնամի» որակումների արանքում Չախալյանը հավաստում է. «Անկեղծ ասած, վրացիների կողմից ես ոչ մի թշնամանք չեմ զգացել: Ես 4,5 տարի նստել եմ վրացիների շրջապատում, ունեմ շատ վրացի ընկերներ: Հերոս, չեմ կարող ասել, ժողովուրդն ու պատմությունն ամեն ինչ իր տեղը կդնի: Բայց երբ ես կարող էի դուրս գալ, պաշտոն ստանալ, մեծ գումարներ վերցնել, ինչ առաջարկում էին, ես հրաժարվեցի, անգամ իմ ազատությունից, որ կարող էի օր առաջ դուրս գալ: Ամեն ինչից հրաժարվեցի, որ պաշտպանեմ ջավախահայության ոտնահարված իրավունքները: Սաակաշվիլու կոչը, թե ժողովուրդը խունթայի մեջ ընկնի, որ Վահագնը դուրս է եկել, ծիծաղելի է, ինչքան տեսնում եմ, ինձնից ոչ ոք չի վախենում, այլ՝ հակառակը»:**

**Վ. Պ.**

## Պատմաքաղաքական

# Կանխել ամերիկյան աղետը Կովկասում

***Ստորեւ թարգմանաբար ներկայացվող հոդվածը պատկանում է անկախ լրագրող Դավիթ Բոյաջյանի գրչին. իր մեկնաբանություններով նա հաճախ է հանդես եկել «Ազգի» էջերում:***

Պատճառորեն չդատապարտելով Ադրբեջանին` Ամերիկան մեծ ռիսկի է դիմում: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շուրջը Կովկասում հայերի եւ ազերիների միջեւ մի նոր պատերազմի սանձազերծումը անկասկած աղետալի հետեւանքներ է ունենալու: Առաջին հերթին քայքայելու է Ադրբեջանի էներգաարդյունաբերությունը: Ադրբեջանի տնտեսությունն ու կոռումպացված կառավարությունը մեծապես կախված են նավթի եւ գազի եկամուտներից, որոնք անկասկած տուժելու են: Հակամարտությունների թատերաբեմ Կովկասը (հիշենք ռուս-վրացական դիմակայումը 2008-ին) անհուսալիորեն ապակայունանալու է, իսկ Մ. Նահանգների քաղաքականությունը հատկապես ծանր վնաս է կրելու:

Ինչպես գիտենք, էներգաարդյունաբերության արեւմտյան հսկաները` «Բրիթիշ փեթրոլիումը», «Շեւրոնը», «Կոնոկո Ֆիլիպսը», «Էքսոն-մոբիլը» եւ «Թոթալը» (Ֆրանսիա) հսկայական կապիտալներ են ներդրել Ադրբեջանի էներգակիր ենթակառուցվածքներում: Եվ հակամարտության միջնորդները` Մ. Նահանգները, Եվրոպան եւ Ռուսաստանը, անկշտում ագահությամբ են լցված Ադրբեջանի նավթի եւ գազի պաշարների հանդեպ: Բայց եթե նրանք, Մ. Նահանգները առաջին հերթին, պաշտոնապես ճանաչեին ԼՂՀ-ի անկախությունը, հակամարտությունը վաղուց վերացած կլիներ: Նման ճանաչումը հարցի միակ գործնական եւ արդար լուծումն է:

Ադրբեջանն անշուշտ կտխրեր, բայց կշարունակեր Արեւմուտքին վաճառել իր նավթի եւ գազի պաշարների մեծ մասը: Ազերիները երբեք չեն սահմանափակվելու միայն Ռուսաստանին վաճառելով իրենց պաշարները, որովհետեւ դա նրանց շատ սերտորեն կկապեր իրենց նախկին «տիրոջ» հետ:

### Ազերիների բռնությունները

Հակամարտությունը Լեռնային Ղարաբաղում սկսվեց 1980-ականների վերջերին, երբ այդ տարածքի հայ մեծամասնությունը, որը երկար ժամանակ ենթարկվում էր հալածանքների Ադրբեջանում, խաղաղորեն հայտարարեց Հայաստանին միանալու իր ցանկության մասին: Ադրբեջանը պատասխանեց արյունահեղ հարձակումներով: Սումգայիթում եւ Գյանջայում ազերի ամբոխը սպանեց Ղարաբաղի հայ բնակիչներին: ՍՍՀՄ-ի փլուզումից հետո` 1991-ին, ԼՂՀ-ն հանրաքվե անցկացրեց եւ քվեարկեց հօգուտ անկախության: Ադրբեջանը հակադարձեց լայնամասշտաբ պատերազմով:

Բայց նույնիսկ թուրք զինվորականների եւ աֆղան մոջահեդների օժանդակությամբ Ադրբեջանը պարտվեց այդ պատերազմում, եւ 1994-ին հրադադար հայտարարվեց: Հակառակ դրան` Ադրբեջանը ամեն օր նոր պատերազմի սպառնալիքներ է տեղում եւ կրակոցներով խախտում սահմանագիծը:

Նավթի եւ գազի եկամուտներով ուռճացած Ադրբեջանի 3 միլիարդ դոլարի ռազմական բյուջեն մեծ է Հայաստանի համընդհանուր ազգային բյուջեից: Բայց Հայաստանի զինված ուժերը միջազգայնորեն ճանաչված են որպես ավելի մարտունակ եւ մոտիվացված խմբավորումներ, քանի որ պաշտպանում են իրենց վաղնջական հողերը:

Ինչքանո՞վ է արդարացված ԼՂՀ-ի բնակչության անկախության պահանջը: Շատ: ԼՂՀ-ն ինչպես պատմական, ժողովրդագրական, այնպես էլ բոլոր այլ առումներով նույնքան իրավունք ունի անկախանալու, ինչքան այլ պետություններ` Հարավային Սուդանը, Արեւելյան Թիմորը, նախկին Հարավսլավիայի հանրապետություններն ու շրջանները:

Նախախորհրդային, խորհրդային եւ հետխորհրդային ժամանակներում ազերիները միշտ էլ հետապնդել եւ սպանել են Լեռնային Ղարաբաղի քրիստոնյա հայերին:

1994-ից ի վեր ԼՂՀ-ն դե ֆակտո գործող, ժողովրդավարական անկախ պետություն է: Հին հույն եւ հռոմեացի պատմագիրներ եւ աշխարհագետներ` Ստրաբոնը, Պլինիոս ավագը եւ ուրիշներ վկայում են, որ Արցախը (Լեռնային Ղարաբաղը) Հայաստանի մաս է կազմել եւ հայկական բնակչություն ունեցել նույնիսկ մեր թվարկությունից առաջ:

Միայն հազար տարի հետո Կենտրոնական Ասիայից թուրքախոս քոչվոր ցեղախմբեր են սկսել թափանցել Կովկաս, բայց ոչ մի անգամ Լեռնային Ղարաբաղում մահմեդականները մեծ թիվ չեն կազմել: 1823-ին կատարված ռուսական մի հարցախույզ նշում է, որ այնտեղ բնակչության 97 տոկոսը հայեր են:

1918-20 թվականներին Թուրքիայի հետ դաշնակցելով` ազերիները հարձակվեցին եւ սպանեցին Ղարաբաղում եւ նրա շուրջը գտնվող հազարավոր հայերի: Դրանից անմիջապես հետո ռուս բոլշեւիկները, քեմալական Թուրքիայի հետ դաշնակցելով, խորհրդային իշխանություն հաստատեցին Կովկասում:

Կովկասում բրիտանական զինվորական ներկայացուցիչ փոխգնդապետ Ջոն Կլովդենը 1919-ին գրած զեկույցում նշում էր, որ Լեռնային Ղարաբաղը «հայերի օրրանն է, Հայաստանի ամենազորավոր մասնիկը, հայկական իր բոլոր` ֆինանսական, զինվորական, հասարակական եւ այլ առումներով»:

Բայց 1921-ին ազգությունների գործերի ժողկոմ Ստալինը Լեռնային Ղարաբաղը նվիրեց Ադրբեջանին, հավանաբար Թուրքիային սիրաշահելու նպատակով: Այդպիսով Ղարաբաղը արհեստականորեն կտրվեց մի քանի մղոն հեռու գտնվող Հայաստանից:

Ադրբեջանը դիտավորյալ անուշադրության մատնեց ոչ միայն Ղարաբաղի տնտեսությունը եւ ենթակառուցվածքները, այլեւ նրա հարաբերություններն ու տրանսպորտային կապը Հայաստանի հետ: Իրավապահ մարմինների բոլոր պաշտոնները հանձնվեցին ազերիներին, չնայած նրանք այնտեղ փոքրամասնություն էին: Հայերը բողոքեցին Մոսկվային, բայց իզուր:

Ադրբեջանի վարած քաղաքականության հետեւանքով Ղարաբաղի հայկական գյուղերի 30 տոկոսը անհայտացավ 1926-1980 թվերին: Իր հերթին, դա բերեց նաեւ ժողովրդագրական փոփոխություններ: Ղարաբաղի հայ բնակչությունը 1921-ին դարձավ 94 տոկոս, 1926-ին` 89 տոկոս, 1970-ին` 80 տոկոս եւ 1989-ին` 76 տոկոս: Եթե դարձյալ հայտնվի ազերիների տիրապետության ներքո, Ղարաբաղը անխուսափելիորեն կբաժանի Նախիջեւանի ճակատագիրը, որը նույնպես Ստալինի նվերն էր ազերիներին, եւ որը անցյալ տասնամյակներում ամբողջովին հայաթափվել է:

Ազերի պաշտոնատար անձանցից մեկը հայտարարել է. «Հայերը երբեք էլ չեն ապրել Նախիջեւանում»: Եվ քանի որ տեղի հայկական եկեղեցիները, հուշարձաններն ու տեղի այլեւայլ շինություններն այլ բան էին ապացուցում, ազերիները հողին հավասարեցրին այդ բոլորը: 2005-ին նրանք հիմնահատակ արեցին հայկական խաչքարերը: Վայրագության տեսաժապավենը տեղակայված է համացանցում: Բնաջնջման արարքը սովորաբար համեմատվում է Աֆղանստանում թալիբների կողմից հին բուդդայական հուշարձանների պայթեցման հետ: Ադրբեջանն արգելում է որեւէ օտար դեսպանի, դիվանագետի կամ դիտորդի այցելել այդ վայրերը:

Ուրիշի պատմությունն ու մշակույթը յուրացնելու ազերիների փորձերը ստիպում են մեզ քննարկել նրանց արմատները:

### Ադրբեջանի ստեղծումը

Շատերն անտեղյակ են, որ «Ադրբեջանը», որպես երկիր, հիմնվել է ոչնչից` 1918-ին Ռուսաստանի բոլշեւիկյան հեղափոխությունից անմիջապես հետո: Տարածաշրջանի մահմեդականները երբեք էլ «ազերի» անունով չեն ճանաչվել, որովհետեւ այդպիսի էթնիկական խմբավորում չի եղել ոչ մի ժամանակ: Նրանք իրենց կոչել են թուրքեր, թաթարներ կամ պարզապես մահմեդականներ: Այդ նույն տարածքում են ապրել նաեւ մեծ թվով հայեր, վրացիներ եւ այլ ազգություններ:

Մինչեւ 1918 թվականը «Ազարբայջան» անունը վերաբերել է 2 նահանգի (բայց ոչ երկրի) Պարսկաստանի (Իրանի) հյուսիսարեւմտյան մասում: Ինքը` «Ազերբայջան» բառը ստուգաբանությամբ պարսկերեն է: Առաջացել է Ալեքսանդր Մեծի կողմից կառավարիչ նշանակված (մոտ 327 թվին մ. թ. ա.) Ատրոպատեսի անունից: Խորհրդային իշխանությունները հավանաբար հորինեցին «Ազերբայջան» անվանումը 1918-ին` Իրանի հետ կապված իրենց ծրագրերը իրականացնելու նպատակով: Երկրորդ աշխարհամարտի տարիներին եւ դրանից հետո նրանք փորձեցին Իրանի հյուսիս-արեւմուտքում ստեղծել «Ազերբայջանի ժողովրդական հանրապետությունը»:

### Ամերիկայի շահադիտական դիրքորոշումը

Մ. Նահանգների պետքարտուղարության դիրքորոշումը Ադրբեջանի հանդեպ կարելի է բնութագրել շահադիտական: 2010-ին նախագահ Օբաման Մ. Բրայզային նշանակեց (հակառակ ազերիների հետ նրա կասկածելի կապերին) Ադրբեջանում Մ. Նահանգների ժամանակավոր դեսպան: Զարմանալի չէր, որ մեկ տարի անց Բրայզան միացավ Ստամբուլում «Turcish Petrol» կորպորացիային, որը «SOCAR»-ի` Ադրբեջանի պետական նավթային ընկերության գործընկերն է:

Մ. Նահանգներ-Ադրբեջան առեւտրի պալատի (USACC) անդամներ են եղել Դիկ Չեյնին, Ջեյմս Բեյքերը, Հենրի Քիսինջերը, Ռիչարդ Արմիտեջը, Զբիգնեւ Բժեզինսկին, Ռիչարդ Պեռլը եւ Բրենդ Սկոուկրոֆտը: Նրանք բարեկամություն են անում Ադրբեջանի էներգաարդյունաբերության մեջ ներդրումներ կատարողների հետ: Իսրայելն ու ամերիկահրեական որոշ կազմակերպություններ դաշնակցում են Ադրբեջանի հետ: Իսրայելի նավթային ներկրումների 30 տոկոսը Ադրբեջանից է գալիս: Իսկ իր կողմից Իսրայելը Ադրբեջանին է վաճառում 1,6 միլիարդ դոլարի արժողությամբ արդիական զենքեր, որոնք օգտագործվելու են ԼՂՀ-ի դեմ:

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը անլուծելի չէ: Փաստերը հստակ են: Ադրբեջանը ոչ մի հիմնավոր փաստարկ չունի ԼՂՀ-ի հանդեպ: Սակայն Մ. Նահանգների պաշտպանությունը Ադրբեջանին կարող է մղել պատերազմ սանձազերծելու:

Ամերիկան նախաձեռնությունը վերցնելով` պետք է ճանաչի Ղարաբաղի անկախությունը: Եվրոպան եւ Ռուսաստանը պետք է հետեւեն նրան: Այլընտրանքային տարբերակը կարող է լինել ամերիկյան մի նոր պատերազմ, որի նյութական եւ մարդկային զոհերի արժեքը մենք` ամերիկացիներս, այլեւս չենք կարող, ի վիճակի չենք վճարել:

**Թարգմ. Հ. Ծ.**

# Լերնա Էքմեքչիօղլուն ուսումնասիրում է Առաջին աշխարհամարտի հայոց պատմությունը

Դոկտ. Լերնա Էքմեքչիօղլուն Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում դասավանդում է 2011-ի աշնանից: Դոկտորական թեզը պաշտպանել է Նյու Յորքի համալսարանում 2010-ին եւ մեկ տարի աշխատել Միչիգանի «Էն Արբոր» համալսարանում: Մասնագիտանում է Թուրքիայում հայերի պատմության գծով, հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի եւ ֆեմինիստական շարժման հայ ներկայացուցիչների պատմությամբ:

Էքմեքչիօղլուն ծնվել է, ըստ «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի հունվարի 5-ի հաղորդագրության, Ստամբուլում: Ծնողները Ադիյամանից եւ Մերսինից են եղել: Հոր ընտանիքը Իսկենդերուն է տեղափոխվել, եւ հայրը հաճախել է դպրեվանքի հայկական գիշերօթիկ դպրոցը: Էքմեքչիօղլուն ինքը հաճախել է հայկական դպրոց եւ ավարտել Ստամբուլի Կեդրոնական վարժարանը: Հետագայում Բողազիչի համալսարանում սկսել է հետաքրքրվել Թուրքիայում ֆեմինիստական շարժման ներկայացուցիչների կյանքով, տեղեկացել Զաբել Եսայանի, Զաբել Ասատուրի եւ Հայկանուշ Մառքի մասին: Նյու Յորքի համալսարանն ու «Զոհրապ տեղեկատվական կենտրոնը» լայն հնարավորություններ են բացում երիտասարդ գիտաշխատողի առաջ, եւ ընկերուհու` Մելիսա Բիլալի հետ թուրքերենով հրատարակում «Արդարության ճիչը: Հինգ հայ ֆեմինիստ գրողներ Օսմանյան կայսրությունում եւ Թուրքական



Հանրապետությունում (1862-1933 թթ.)» հատորը, որը անմիջական կապ ուներ դոկտորական իր թեմայի հետ, որն ավելի ընդգրկում էր եւ ներառում էր հետ I աշխարհամարտի հայերի պատմությունը Թուրքիայում: Այժմ նա աշխատում է «Շարունակելով ապրել նոր Թուրքիայում: Հայերը հետօսմանյան Ստամբուլում» մենագրության վրա, որը նա պատրաստվում է հրատարակել անգլերենով: Նրան հուզող կարեւոր հարցերից մեկն այն է, թե ինչու հնարավորություն ունեցող հայերն այնուամենայնիվ որոշեցին մնալ Թուրքիայում եւ միանալ քեմալական շարժմանը: Նա հավաստացած է, որ հողը եւ ընտանիքը կարեւոր նշանակություն են ունեցել հայերի համար:

Նա շնորհակալ է բոլոր նրանց, ովքեր հնարավորություն են ընձեռել խորանալու իրեն հետաքրքրող թեմաների մեջ: Նրանց թվում են Հայկական ուսումնասիրությունների ազգային ասոցիացիան, Հայ կանանց միջազգային ասոցիացիան եւ Լոս Անջելեսի ստամբուլահայերի կազմակերպությունը: Նրա առաջիկա հոդվածը` «Ներառման քաղաքականությունը Հայոց պատմությունից հետո» խորագրով, վերաբերում է հայ կանանց եւ նրանց երեխաների ինքնության վերականգնմանն ու հողային պահանջատիրության հարցերին: Հոդվածը այս տարվա առաջին կիսամյակում տպագրվելու է Հյուսիսային Ամերիկայում հեղինակավոր «Comparative Studies in Society and History» (Հասարակագիտության եւ պատմության համեմատական ուսումնասիրություններ) պարբերականում:

**Հ. Ծ.**

# «Սիրիայում Թուրքիայի ստանձնած դերը դժգոհություն է պատճառում ողջ աշխարհին»

## Հայտարարում է Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքին

Ինչպես նշել էինք նախորդ համարում, փետրվարի 4-ին Ժողովրդա-հանրապետական կուսակցության նախագահ Քեմալ Քըլըչդարօղլուն վարչապետ Էրդողանին մեղադրել էր Իսրայելի շահերին ծառայելու մեջ: Մեղադրանքի առիթը իսրայելական օդուժի Սիրիային հասցրած հարվածը քար լռությամբ շրջանցելու Թուրքիայի վարչապետի վարքագիծին է:

Հաջորդ օրը՝ փետրվարի 5-ին այդ նույն վարքագծի պատճառով մեղադրել է նաեւ Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքին, բայց ոչ թե Ռեջեփ Թայիփ Էրդողանին, այլ Թուրքիային: «Դունյա բուլթենի» կայքէջի վկայությամբ, լիբանանյան «Ալ Մայադին» հեռուստատեսությանը տված հարցազրույցում նա Մերձավոր ու Միջին արեւելքի առկա վիճակը նմանեցրել է ժայթքող հրաբխի, ապա շարունակել է. «Թուրքիան սեփական պահանջները Սիրիային, Իրաքին ու Եգիպտոսին պարտադրելու փորձերով խնդրահարույց է դարձրել այս երկրների ազգային անվտանգությունը»:

Վարչապետ Նուրի ալ Մալիքին, մեղադրելով Թուրքիային Իրաք-Սիրիա-Եգիպտոս առանցքը կազմալուծելու, թերեւս դրանով էլ Իսրայելի շահերին ծառայելու մեջ, իսրայելական օդուժի վերջին հարձակումը սիրիական գիտական կենտրոնի վրա համարել է նվաստացուցիչ արաբական եւ իսլամական աշխարհների համար: Վերջում նա ընդգծել է, որ Սիրիայում Թուրքիայի եւ Քաթարի ստանձնած դերակատարությունը դժգոհություն է առաջացնում աշխարհով մեկ:

Ինչո՞վ է պայմանավորված ողջ աշխարհի դժգոհությունը: Ըստ երեւույթին, ԱՄՆ-ի ու ԵՄ-ի համար Սիրիայի նախագահ Բաշար Ասադի վարչակարգի տապալման անկանխատեսելի հետեւանքներով: Տապալման հարցում արեւմտյան տերությունները, որոնք էլ, ըստ ամենայնի, ներկայացնում են այսպես կոչված ողջ աշխարհը, համամիտ են: Պարզապես նրանց անհանգստացնում է Սիրիայում իսլամ արմատականների իշխանության գալու հավանականությունը:

Սիրիական ընդդիմության մասնատվածությունը 16 առանձին խմբավորումների, այդ տերություններին կանգնեցնում է իշխանափոխությունից հետո երկրում վերահսկողությունը կորցնելու սպառնալիքի առջեւ: Ընդդիմության մասնատվածությունը նրանց զրկում է նաեւ իշխանության թեկնածուների հարցում կողմնորոշվելու հնարավորությունից: Մինչ Արեւմուտքն օգնում է սիրիական ընդդիմությանը՝ կառավարական զորքերի հետ պատերազմը շարունակելու, այլ ոչ թե հաղթանակ ապահովելու համար, որպեսզի թեկնածուների հարցում կողմնորոշվելու ժամանակ ունենա, Թուրքիան նախագահ Ասադին անհապաղ տապալելու նկրտումներով վճռական գործողությունների դիմելու պահանջ է ներկայացնում արեւմտյան տերություններին, անտեսելով ընդդիմության եւ իշխանության միջեւ երկխոսություն հաստատելու վերջիններիս ջանքերը: Սիրիայում Թուրքիայի դերակատարությունից ողջ աշխարհի դժգոհության մասին արտահայտվելիս, հենց այդ հանգամանքն է նկատի ունեցել Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքին:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Սիրիայի հատուկ ծառայության պետին ձերբակալելու որոշում Լիբանանում




Լիբանանի դատախազությունը կարգադրել է ձերբակալել Սիրիայի հատուկ ծառայության ղեկավար, բրիգադային գեներալ Ալի Մամլուկին: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը, վկայակոչելով Լիբանանի դատական մարմինների աղբյուրներ: Մամլուկին մեղադրում են Լիբանանի տարածքում ահաբեկչությունների նախապատրաստմանը մեղսակից լինելու մեջ:

Գեներալին այդ մեղադրանքները հեռակա կարգով ներկայացվել էին դեռ 2012-ի ամռանը: Լիբանանը նաեւ կարգադրել էր ձերբակալել սիրիացի գնդապետ Ադնանին:

Լրատվամիջոցների տվյալներով, Ալի Մամլուկը եւ Ադնանը դատի ենթակա են նույն գործով, ինչ Լիբանանի տեղեկատվության նախկին նախարար Միշել Սամահան: Վերջինս ձերբակալված է 2012-ի օգոստոսից եւ արդեն խոստովանական ցուցմունքներ է տվել:

Լիբանանի իշխանությունները պնդում են, թե նրանք բոլորը մտնում են այն խմբի մեջ, որը մի քանի ահաբեկչություն էր ծրագրել Սիրիայի պատվերով: Այդպիսով, Դամասկոսն ուզում էր ապակայունացնել հարեւան երկրի իրադրությունը եւ աշխարհի ուշադրությունը շեղել Սիրիայի քաղաքացիական պատերազմից:

Գեներալ Ալի Մամլուկը Սիրիայի պետանվտանգության բյուրոն ղեկավարում է 2012-ի հուլիսից: Նա այդ պաշտոնում փոխարինեց Միշել Իխտիարին, որը Դամասկոսում սպանվել էր ահաբեկչության հետեւանքով: Մամլուկը իր երկրի անվտանգության փաստորեն բոլոր ծառայությունների ղեկավարն է եւ դրանց գործունեության համար հաշվետու է միայն նախագահ Բաշար Ասադին:

# Հնդկաստանում մահապատժի կենթարկեն բռնաբարողներին

Հնդկաստանի նախագահ Պրանաբ Մուքերջին հավանություն է տվել այն նախաձեռնությանը, որը մահապատիժ է սահմանում բռնաբարողների համար: Այդ մասին հաղորդում է «Ուոլ Սթրիթ ջորնըլ» թերթը:

Խորհրդարանը պետք է 6 շաբաթվա ընթացքում հաստատի որոշումը, որից հետո այն անհապաղ կկիրարկվի: Նորացված օրենքի համաձայն, բռնացողները ենթակա կդառնան յոթ տարվա բանտարկությունից մինչեւ մահապատժի: Սակայն Քրեական օրենսգրքում կմնա այն բացառությունը, ըստ որի առավելագույն պատժաչափը չի տարածվի ամուսնական զույգերին վերաբերող բռնաբարությունների վրա:

Իշխանությունները օրենսդրությունը խստացնելու որոշում ընդունեցին տարեվերջին տեղի ունեցած բռնաբարության դաժան միջադեպից հետո: Դեկտեմբերի 16-ին Դելիի մասնավոր ավտոբուսներից մեկում 6 տղամարդ բռնաբարել էին 23-ամյա մի ուսանողուհու, ապա դուրս էին գցել ընթացքի ժամանակ: Դրանից հետո բազմամարդ ցույցերի մասնակիցները պահանջել էին խստացնել օրենսդրությունը, որի ներկայիս առավելագույն պատժաչափը ցմահ բանտարկությունն է:

ԾԽԱԽԵՂԴ

# Չինաստանը ծածկող ծխամքը հասել է Ճապոնիա



**Վերջին շաբաթներին Չինաստանի տարածքի մեծ մասը ծածկված է հեղձուցիչ ծխամքով, որն արդեն հասել է նաեւ Ճապոնիայի ափերին: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ տագնապահար ճապոնացիները իրենց հեռախոսազանգերով խուճապ են առաջացրել շրջակա միջավայրի նախարարությունում: Պաշտոնյաները զանգատվում են, քաղաքացիների բարձր ակտիվությունը փաստորեն իրենց համար անմատչելի է դարձրել օդային համակարգի վերահսկողությունը:**

**Ինչ վերաբերում է Չինաստանին, այնտեղ իրավիճակը մնում է լարված: Անցյալ շաբաթ իշխանությունները ձեռնարկեցին մի շարք միջոցներ, որոնց շնորհիվ արձանագրվեց որոշ բարելավում: Մասնավորապես փակվեց 103 արդյունաբերական ձեռնարկություն, ինչպես նաեւ 30 տոկոսով կրճատվեց պետական ավտոմեքենաների երթեւեկությունը: Անցյալ հինգշաբթի սահմանափակումները վերացվեցին, եւ իրավիճակը կրկին սկսեց վատթարանալ: Այդ մասին հաղորդում է The Straits Times թերթը:**

**Երկուշաբթի օրը մթնոլորտում վնասակար նյութերի պարունակությունը 1 խմ-ում 21 միկրոգրամ էր: Հունվարի 12-ին այդ ցուցանիշը հասել էր 1000 միկրոգրամի. դա 40 անգամ գերազանցում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության հաստատած թույլատրելի առավելագույն սահմանը:**

**Խոսքը մինչ 2,5 միկրոն տրամագծով մանր ու ցրված մասնիկների մասին է: Իրենց փոքր չափերի պատճառով դրանք կարող են խորությամբ թափանցել մարդկանց թոքերի մեջ եւ մնալ այնտեղ: Այդ մասնիկների հիմնական աղբյուրներն են վառելիքի այրումից առաջացող ծուխը եւ ավտոմեքենաների արտանետումները:**

**Ծխամքի համար Չինաստանում գլխավոր մեղավորները China National Petroleum Corp. (CNPC) եւ Sinopec նավթային ընկերություններն են: Արտանետվող գազերի վերահսկման կենտրոնի տվյալներով, ընկերությունները չեն անցել դեռ անցյալ տարի Չինաստանում ընդունված նոր չափորոշիչներին, որոնցով նախատեսվում է վառելիքի մեջ կրճատել ծծմբի պարունակությունը:**

**Պեկինի եւ շրջակայքի օդի աղտոտվածության պատճառով ՉԺՀ մայրաքաղաքը տարեկան կորցնում է 19-39 մլրդ դոլար, նշվում է Accenture Sustainability Services կազմակերպության հաշվետվության մեջ:**

**Ներկայումս ՉԺՀ շրջակա միջավայրի նախարարությունը պատրաստում է նոր հրահանգ, որով պահանջվում է կարծր խառնուրդների եւ ազոտի օքսիդի արտանետումները կրճատել համապատասխանաբար 80 եւ 30 տոկոսով: Սակայն CNPC եւ Sinopec ընկերությունները հրաժարվում են ինքնուրույն կատարել փոփոխությունների հետ կապված ծախսերը:**

# Մակքեյնը Ահմադինեժադին ծաղրել է

Ամերիկացի սենատոր Ջոն Մակքեյնը Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադին համեմատել է կապիկի հետ, մեկնաբանելով տիեզերք թռչելու վերաբերյալ նրա արտահայտած ցանկությունը: Մակքեյնը համապատասխան հայտարարություն է տեղադրել իր անձնական կայքէջում:

«Եվ այսպես, Ահմադինեժադն ուզում է դառնալ տիեզերք թռչող առաջին իրանցին: Բայց մի՞թե նա այնտեղ չէր անցյալ շաբաթ», հարց է տալիս Մակքեյնը, իր խոսքերին կցելով այն լուրը, ըստ որի «Իրանը կապիկ է ուղարկում տիեզերք»:

Դեպի տիեզերք կապիկ ուղարկելու մասին Իրանի պաշտոնական լրատվամիջոցները հաղորդել էին հունվարի 28-ին: Նշվել էր, որ տիեզերք արձակված պարկուճը հաջողությամբ վայրէջք է կատարել ըստ ժամանակացույցի:

Իրանական կապիկի տիեզերական թռիչքից մի քանի օր անց Արեւմուտքի մամուլը կասկածներ էր արտահայտել առաքելության հաջողության առնչությամբ: Լրատվամիջոցները մասնավորապես համեմատել էին կենդանու թռիչքից առաջ եւ հետո արված պաշտոնական լուսանկարները, բացահայտելով, որ մորթու գույնը փոխվել է, իսկ աջ աչքի տակի խալը՝ անհետացել:

Փետրվարի 4-ին Մահմուդ Ահմադինեժադը, որի նախագահական լիազորությունների ժամկետն ավարտվում է այս տարի, իրանական օդատիեզերական ճյուղի նվաճումների ցուցահանդես կատարած այցելության ժամանակ հայտարարեց, թե ինքը պատրաստ է դառնալ «առաջին մարդը, ում ուղեծիր դուրս կբերեն իրանցի գիտնականները»:

Իրանի իշխանությունները մտադիր են առաջին տիեզերագնացին ուղեծիր դուրս բերել 2021 թվականին:

ԱԶԳ

# Մշակույթ

ԱՎՍՏՐԱԼԻԱ

## «Սահման» ֆիլմը ցուցադրվեց Քուինսլենդի արվեստի պատկերասրահում

2012-ը պատմական կարեւորություն ունեցող տարեթիվ էր հայկական կինոյի պատմության համար, քանի որ մեր կինեմատոգրաֆիայի պատմության մեջ առաջին անգամ հայկական կինոյի առջեւ իր դռները բացեց Լուվրի թանգարանը: Անցյալ տարվա հոկտեմբեր ամսին Հարություն Խաչատրյանի «Սահման» ֆիլմը ցուցադրվեց Լուվրում, որին ներկա էին ֆիլմի ռեժիսորն ու Հայաստանի կինոակադեմիայի նախագահ, կինոգետ Դավիթ Մուրադյանը: Հարություն Խաչատրյանին ֆրանսաբնակ կինոսէրներին ներկայացրեց իրանցի նշանավոր կինոռեժիսոր Աբաս Քիարոսթամին:

Այդ ցուցադրությունից հետո 2009 թվականին նկարահանված «Սահման» ֆիլմի համար նոր շրջան սկսվեց:

2013 թվականի փետրվարի 2-ին Ավստրալիայի Բրիզբեն քաղաքի Քուինսլենդի արվեստի նշանավոր պատկերասրահում ցուցադրվեց «Սահման» ֆիլմը: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր ստեղծագործության ցուցադրությունն այդ պատկերասրահում մեծ իրադարձություն է: Ուստի փառատոնային բուռն կյանքից եւ պատվավոր մի շարք մրցանակներից հետո «Սահման» ֆիլմի քուինսլենդյան այս ցուցադրությունը ոչ միայն հարստացնում է ֆիլմի կենսագրությունը, այլեւ եւս մեկ ձեռքբերումով համալրում հայկական ժամանակակից կինոյի պատմությունը:

## Երիտասարդական նվագախմբի հերթական համերգը՝ Գյումրիում

Փետրվարի 7-ին՝ ժամը 17:00-ին, Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյան) համերգային ծրագրով ելույթ կունենա Գյումրու Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում:

Հանդիսատեսին կներկայացվի բազմաժանր ծրագիր՝ դասական ստեղծագործություններից մինչեւ հոլիվուդյան կինոարվեստի գլուխգործոց դարձած հանրահայտ ֆիլմերի երաժշտություն: Կհնչեն Ալեքսանդր Հարությունյանի, Դմիտրի Շոստակովիչի, Էդվարդ Միրզոյանի, Էդվարդ Գրիգի, Մոնթի Նորմանի, Ջոն Ուիլյամսի, Հանս Զիմերի, Ջեյմս Հորների, Էնիո Մորիկոնեի եւ Նինո Ռոտայի ստեղծագործությունները:

Հավելյալ տեղեկատվության համար դիմել՝ (010) 58 14 71, (098) 310 360:

*Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի հասարակայնության հետ կապերի բաժին*

*media@bemproduction.am*

## Առ որ անկ է

Յուրաքանչյուր գործ, հասկապես մնայուն, արժանի է գնահատանքի եւ դրվատանքի, սակայն ոչ արդեն կատարվածը անտեսելու, մոռանալու հաշվին:

Փորձենք միտքը հստակեցնել:

Մենք՝ Հերոս եւ Անահիս Քաջբերունիներս, ԱՄՆ-ի Գլենդել քաղաքի մեր տանը սպասում էինք Հ1-ով հեռարձակվող, 2013 հունվարի 20-ի «Երգ-երգոցին», որը նվիրված էր լուսահոգի Սիլվա Կապուտիկյանի տարեդարձին:

Ընդհանրապես մեծ բավականությամբ ենք հետեւում այդ հաղորդաշարին, այդ օրն՝ առավել, քանզի մեր անձնական բարեկամությունն ու հարգանքը Համայն հայոց բանաստեղծուհու հանդեպ մեր սպասումին հավելյալ հուզում էր հաղորդել:

Սակայն ցավով պետք է արձանագրենք, որ այդ ջերմ ու տաք զգացումները երկար չտեւեցին, քանզի ստահոդ մի հայտարարություն դառնացրեց մեզ... Ս. Կապուտիկյանի տուն-թանգարանի տնօրենուհին խոսում էր իրենց կատարած աշխատանքներից, որոնց շարքում առանձնացրեց այն «փաստը», թե շուտով, իբր առաջին անգամ, լույս կտեսնի Ս. Կապուտիկյանի մանկական բանաստեղծությունների «Փոքրիկ Արա, ականջ արա» գունազարդ գիրքը:

Ակամա վերհիշեցինք այն օրը, երբ տիկին Սիլվան ձեռքին ունենալով 1981 թվականին («Սովետական գրող», 20.000 օրինակ) տպագրված գիրքը ասաց, թե այսօրվա տպագրական հնարավորություններն այլ են, կուզեր, որ «Փոքրիկ Արա, ականջ արա» գիրքը վերահրատարակվեր ավելի շքեղ ու գունեղ:

Ուրախությամբ ստանձնեցինք գրքի հրատարակությունը եւ արդյունքում մի գեղեցիկ գիրք լույս աշխարհ եկավ, 1500 տպաքանակով, որի գերակշիռ մասը տիկին Սիլվայի փափագով, որպես բարեգործություն հասկացվեց մանկական գրադարաններին եւ դպրոցներին:

Հիշում եմ նաեւ, որ երբ գրքի առաջին օրինակը ձեռքն առավ բանաստեղծուհին, հուզումով ասաց.

«Շնորհակալ եմ, այսպիսի շքեղության արժանացնելու համար...»

Ի հարկին, մենք չբացառենք նոր տպաքանակի հնարավորությունը, միայն այն վստահությամբ, որ այս անգամ կետերը կդրվեն միայն «i»-ի վրա:

ԱՆԱՀԻՏ ԵՎ ՀԵՐՈՍ ՔԱՋԲԵՐՈՒՆԻՆԵՐ


**«Ռոմեո Ջուլիետ»**-ի

այս հրատարակությունը Շեքսպիրի «Ընտիր երկեր»-ի եռահատորյակում (հ. 1, Երեւան, 1951) լույս տեսած դաշտենցյան թարգմանության ապա երկհատորյակում (հ. 1, Երեւան, 1964) տեղ գտած նույն թարգմանության վերամշակված տարբերակի համադրումն է տեքստային առումով: Խմբագրական շտկումից զատ, ուղղվել են ինչ-ինչ թարգմանական վրիպումներ: Ի լրումն՝ ողբերգությունն առաջին անգամ հայերեն տպագրվում է ուշագրավ տվյալներ մեկնություններ պարունակող ծավալուն ծանոթագրություններով:

*Հարցնել «Հայ գիրք» գրախանութների ցանցում*

Հեռ.՝ 54-07-06, 58-30-59, 53-33-91





## 2012 տարին բարեհաջող էր Հանրային ռադիոյի էստրադային սիմֆոնիկ նվագախմբի համար

Երկ բարձրարժեք երաժշտություն մատուցելու, քարոզելու եւ ակտիվ քաղաքացիական դիրքորոշման համար Հայաստանի Հանրային ռադիոյի էստրադային սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար **Երվանդ Երզնկյանը** «Իրավունք» թերթի կողմից պարգեւատրվեց պատվոգրով՝ որպես 2012 թվականի մշակույթի բնագավառում լավագույն գործիչ:



Ամփոփելով 2012 թվականը, Երվանդ Երզնկյանն ասաց, որ տարին իր համար շատ լավն էր. «Մի քանի տարի առաջ ՀՀ նախագահն ինձ խոսք էր տվել, որ կլուծի գործիքների հետ կապված խնդիրները եւ ահա, այս տարի, նվագախումբը վերջապես ստացավ բարձրակարգ գործիքներ»:

Անդրադառնալով խնդիրներին՝ Ե. Երզնկյանն ասաց, որ շուրջ 30 տարի չի վերանորոգվել իրենց փորձասենյակը եւ մեծության պատճառով որքան էլ ջեռուցում են, չի տաքանում:

Նվագախմբի խնդիրներից է նաեւ աշխատավարձը. «32 հազար դրամով պահել այդքան բարձրակարգ երաժիշտներ շատ դժվար է»:

Նշենք, որ նախապես շուրջ տասը տարի, նվագախմբի երաժիշտները աշխատել էին առանց աշխատավարձի:

Նվագախմբի գեղարվեստական ղեկավարը հիշեց նաեւ, թե ինչպես էին տարիներ առաջ դժվարությամբ վարձակալում Կ. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոնը եւ շոուներ կազմակերպում, որպեսզի գումար վաստակեին. «Ես եւ Կարեն Քոչարյանը շրջում էինք տարբեր խանութներով, կազմակերպություններով, որպեսզի շոուի տոմսերը վաճառեինք եւ գումար հայթհայթեինք նվագախմբի համար»:

Երզնկյանը իր շնորհակալությունը հայտնեց թատրոնի գեղարվեստական ղեկավար Ալեքսանդր Գրիգորյանին, որը թույլ էր տվել թատրոնում նման շոուներ կազմակերպել՝ միայն լույսի վճարի համար չնչին գումար վերցնելով:

«Շատ դժվար է այժմ նվագախումբ պահել, հաճախ ես եմ համերգներ կազմակերպում՝ հավելյալ գումար հայթայթելու եւ նվագախմբի երաժիշտներին բաժանելու համար: Այսուհանդերձ նվագախումբը գնում է առաջ՝ շարունակելով իր ստեղծագործական բուռն գործունեությունը»,- ասաց Ե. Երզնկյանը:

Ե. Երզնկյանը ղեկավարել է Կոնսերվատորիայի էստրադայի եւ ջազի ամբիոնը: Անդրադառնալով երիտասարդ սերնդին նա ասաց. «Կարող եմ ասել, որ շատ լավ սերունդ ունենք, որի ներկայացուցիչներից շատերը չեն երեւում հեռուստատեսությամբ եւ այդքան էլ հայտնի չեն՝ ֆինանսական հնարավորություններ չունենալու պատճառով»:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## Թանգարանի նվիրյալը՝ *Օֆելյա Այվազյան*

**Մշակութային խոշոր արժեքներ ամբարած Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանը հիմնականում ընդգրկում է 18-րդ դարից մինչեւ մեր օրերն ընկած ժամանակաշրջանի հայ մշակույթի չորս խոշոր բնագավառներ՝ գրականություն, թատրոն, երաժշտություն եւ կինոարվեստ:**

**Անխոնջ նվիրումով թանգարանում տարիներ շարունակ աշխատում են մարդիկ, տարիների փոշին մաքրում այդ փաստաթղթերի վրայից, բազում դժվարություններ հաղթահարելով կազմում այդ արժեքավոր վավերագրերի ժողովածուները, դրանք դարձնելով մեր բոլորի սեփականությունը:**



Այդ անխոնջ նվիրյալներից մեկն է Օֆելյա Այվազյանը, որը 50 տարի աշխատում է թանգարանում՝ հավատարիմ մնալով իր կոչմանը: Այսօր նա ղեկավարում է թանգարանի կինոարվեստի բաժինը: Ի դեպ, հաճելի զուգադիպությամբ այս տարի տասներորդ մուսային վերաբերող այս բաժինը բոլորեց 35-ամյակը: Վերջերս թանգարանում մեծ շուքով նշվեց Օֆելյա Այվազյանի աշխատանքային գործունեության 50-ամյակը:

Թանգարանի տնօրեն **Կարո Վարդանյանը** ողջունեց երկարամյա աշխատակցին, կարեւորեց նրա վաստակը, որ յուրաքանչյուր գործի մեջ ներդրել է իր անսպառ եռանդն ու ստեղծագործական երեւակայությունը: Երեկույթի ընթացքում հուշեր պատմեցին Բախտիար Հովակիմյանը, Ստեփան Անդրանիկյանը, Ռոբերտ Մաթոսյանը, Սերգեյ Գալստյանը՝ ամբողջացնելով Օֆելյա Այվազյան նվիրյալի մարդկային նկարագիրը: Թանգարանի գիտական գծով փոխտնօրեն Գուրգեն Գասպարյանը իր խոսքը կառուցել էր այնպես, որ հնարավորին չափ մանրամասն ներկայացվի Օֆելյա Այվազյանի աշխատանքային ուղին: «Շուրջ հինգ տասնամյակ Օֆելյա Այվազյանը ծառայել է հայ մշակույթին, եւ այժմ էլ նրա ներկայությունը թանգարանում անգնահատելի պատեհություն է, քանի որ արխիվային գործում ամենամեծ ձեռքբերումն ու արժեքը երկարամյա փորձառությունն է եւ նվիրվածությունը մշակույթին:

Օֆելյա Այվազյանը իրոք որ այս հատկանիշների կրողն է ու փոխանցողը, եւ նրա աշխատանքը թանգարանում սերունդների կապի ամենավառ օրինակն է թե՛ արխիվային գործի, թե՛ մասնագիտական փորձառության տեսակետներից: Օֆելյա Այվազյանը անգնահատելի ավանդ ունի հայ կինոյի պատմության եւ հայ կինոգործիչների գործունեության գիտականորեն ճշգրիտ ուսումնասիրման բնագավառներում: Եթե դրան ավելացնում ենք մարդկային հմայիչ նկարագիրը, նվիրվածությունը աշխատանքին եւ սերը ազգային արժեքների նկատմամբ, ապա կարող ենք աներկբա վկայել, որ գործ ունենք ճշմարիտ մտավորականի եւ նվիրյալի հետ»:

Այո, կան մարդիկ, որոնց մասին քիչ է խոսվում եւ գրվում, նրանց շուրջը գրեթե չի լինում աղմուկ: Այդուհանդերձ, նրանք ունեն ծանրակշիռ վաստակ, ստեղծագործական հարուստ եւ հետաքրքրական կենսագրություն:

Օֆելյա Այվազյանը ծայր աստիճան պահանջկոտ ու խիստ է իր արածի նկատմամբ: Թանգարանի մասին նրա պատկերացումները ծնել են նրա մեջ գեղեցիկ մի իդեալ, որին կարելի է հասնել միայն քրտնաջան աշխատանքով ու նվիրումով: Նա միշտ աշխատել է մի տեսակ ակնածանքով, անաղմուկ, վարպետորեն: Օֆելյա Այվազյանի գործունեության մեջ հատկապես կարեւոր են հոգեւորի ընկալումը եւ ինքնատիպ մոտեցումը, որ նա բացահայտում է իր ներաշխարհը, զգացմունքները եւ այդ ամենը կարողանում է վարպետորեն փոխանցել իր աշխատակիցներին: «+Կինո» ամսագրի գլխավոր խմբագիր **Ռոբերտ Մաթոսյանի** համոզմամբ, հայ մտավորականության մի խավ կա, որն աներեւույթ, առանց բարձրաձայնելու աշխատում է գիտության ու մշակույթի օջախներում, ովքեր բացի իրենց նվիրումից այլեւայլ հավակնություններ չեն տենչում:

Չեն տենչում ոչ թե նրա համար, որ իրենց գործունեության շրջանակն այդքանն է, այլ նրա համար, որ իրենց ստեղծած աշխարհը խորհրդավոր է եւ իր մեջ մարդկային կենսագրությունների խորհուրդ է պարունակում:

Օֆելյա Այվազյանը կինոբաժնի ակունքներից է, նրա շնորհիվ է, որ թանգարանում խնամքով իրենց տեղն են գտել մեր կինոյի երախտավորները: Կարծում եմ, իր կեսդարյա աշխատանքային գործունեության ընթացքում տիկին Օֆելյան նրանց ուղու մասին ավելի շատ գիտե, քան հենց իրենք՝ կինոգործիչները: Եվ այդ ամենը գալիս է նրա բանիմացությունից ու նվիրումից»:

Կան մարդկային յուրահատուկ էություններ, որոնք գալիս են երկիր, բերելու իրենց հոգու լույսը, անկրկնելի այն ամբողջությունը, որը իրենցը լինելով հանդերձ նաեւ Տիեզերքի մի մասնիկն է: Նրանք յուրահատուկ են այն քնքուշ ներքին էության մեջ, որից ճառագում է միայն սեր...

Հիրավի անմնացորդ նվիրում, սեր... Եվ այդ սերն է, որ նրա հոգում ծնել է անվերջ լույսի ճանապարհ, եւ որ կյանքի այվազյանական փիլիսոփայությունն է՝ մարդկանց տեսնել երջանիկ...

ԱՐՓԻՆԵ ԱՍԼԱՆՅԱՆ

# Յուրա Մովսիսյան. «Մի քանի շաբաթից 100 տոկոսով պատրաստ կլինեմ»

*Յուրա Մովսիսյանը գոլով նշանավորեց նորամուտը Մոսկվայի «Սպարտակի» կազմում: Արաբական Միացյալ Էմիրություններում ուսումնամարզական հավաք անցկացնող «Սպարտակը» ստուգողական խաղում 2-0 հաշվով հաղթեց տեղի «Ալ Դաֆրային»: 62-րդ րոպեին փոխարինման դուրս գալով, Յուրա Մովսիսյանը 19 րոպե անց տուգանային հրապարակի մատույցներից կատարած դիպուկ հարվածով կրկնապատկեց հաշիվը: Խաղավերջում Յուրան կարող էր նաեւ իր 2-րդ գոլը խփել, սակայն հաջող խաղաց մրցակցի դարպասապահը՝ հետ մղելով գնդակը: «Ալ Դաֆրայի» հետ խաղից հետո Յուրա Մովսիսյանը հարցազրույց է տվել «Սպարտակի» պաշտոնական կայքին:*



**- Յուրա, շնորհավորում եմ հաջող նորամուտի առթիվ: «Սպարտակի» կազմում առաջին իսկ խաղում, թեկուզ եւ ընկերական, քեզ հաջողվեց գոլի հեղինակ դառնալ: Ինչպե՞ս կգնահատես խաղը:**

- Իհարկե, շատ երջանիկ եմ, որ վնասվածքից հետո կրկին վերադարձա խաղադաշտ եւ արդեն կարող եմ խաղալ: Ինձ համար առավել կարեւորը ոչ թե խփածս գոլն է, այլ թիմի տարած հաղթանակը «չոր» հաշվով:

**- Ամեն դեպքում, խաղադաշտ դուրս գալով, դու կես ժամ շատ հաջող խաղացիր:**

- Կարող էի նաեւ 2-րդ գոլը խփել: 2-3 լավ պահ ունեցա: Սակայն սկզբի համար մեկ գոլն է բավարար է:

**- Ե՞րբ կկարողանաս ամբողջ 90 րոպեն խաղադաշտում անցկացնել:**

- Դա որոշ ժամանակ կպահանջի: Լիարժեք մարզումները սկսել եմ ընդամենը 10 օր առաջ: Իսկ մինչ այդ 4 ամիս չեմ մարզվել: Ներկայումս բացի ամենօրյա մարզումներից նաեւ բուժման կուրս եմ անցնում: Կարծում եմ, որ մի քանի շաբաթից արդեն 100 տոկոսով պատրաստ կլինեմ:

**- «Սպարտակում» խփած առաջին գոլն ո՞ւմ կնվիրես:**

- Առաջին գոլը, նույնիսկ ոչ պաշտոնական խաղում, անկասկած շատ կարեւոր է: Մանավանդ որ «Սպարտակում» խաղալիս ինձ համար ոչ մի հանդիպում էլ ընկերական բնույթ չի կրում: Այդ գոլը կարող է օգնել ինձ վերադարձնելու վստահությունս: Ուստի այսօրվա խփած գոլը ցանկանում եմ նվիրել բոլոր նրանց, ովքեր հավատում եւ աջակցում էին ինձ, երբ վնասվածք ունեի եւ որոշեցի տեղափոխվել «Սպարտակ»:

**- Ինչո՞ւ «Սպարտակում» ընտրեցիր 12 համարի մարզաշապիկը:**

- Որովհետեւ կուռքս՝ Թյերի Անրին այդ համարի մարզաշապիկ է կրում: Իսկ ազգային հավաքականում հանդես եմ գալիս 14 համարի մարզաշապիկով: Այդ համարով եւս Անրին խաղացել է: Ինձ դուր եկող մյուս համարներն արդեն զբաղված էին, ուստի ընտրեցի իմ սիրած ֆուտբոլիստի համարը:

**- Իսկ ինչո՞ւ ես սիրում Անրիին:**

- Պարզապես նա աշխարհում լավագույններից մեկն է: Անրին յուրօրինակ խաղաոճ ու էներգետիկա ունի եւ նրա գործողություններին հետեւելը մշտապես հետաքրքրական է: Երբ Անրիին տեսնում ես խաղադաշտում, իրական բավականություն ես ստանում ֆուտբոլից: Նրա նվաճումներն ու խփած գոլերն ինձ գրավել են դեռեւս մանկուց:

**- Իսկ եթե ձեռքով գոլ խփես, խաղից հետո կխոստովանե՞ս:**

- Այո: Այդ կերպ գոլ խփել եմ: Սակայն եթե դու ձեռքով ես խաղացել ու մրցավարը չի սուլել, ապա պարտավոր ես գրավել դարպասը եւ օգնել տալ թիմիդ: Իհարկե, պետք է ազնիվ լինել, բայց եթե մրցավարը գոլն արձանագրել է, ուրեմն վերջ:

**- Ի՞նչն է քեզ դուր գալիս Ռուսաստանում, որը չկա ԱՄՆ-ում:**

- Լեզու սովորելու հնարավորությունը: Մանկուց ցանկացել եմ ռուսերեն խոսել: Ռուսերենն ինձ միշտ դուր է եկել:

**- Ընտանիքում հայերե՞ն ես խոսում, թե՞ անգլերեն:**

- Միայն հայերեն: Եվ ոչ միայն ես, այլեւ ամբողջ ընտանիքս: Վստահ եմ, որ երեխաներս էլ հայերեն կխոսեն:

**- Քեզանից բացի, «Սպարտակում» կա՞ մեկը, որ հայերեն գիտի:**

- Ոչ մեկը չգիտի: Որոշ ֆուտբոլիստներ հայերեն ընդամենը մի քանի բառ գիտեն: Փոխարենը «Սպարտակում» ժամանակին մի քանի հայ ֆուտբոլիստներ են հանդես եկել, ինչը շատ կարեւոր է:

**- Գիտե՞ս, որ ծնվել ես «Սպարտակի» չեմպիոնության տարում:**

- Հիմա արդեն գիտեմ: Կարծում եմ, որ դա լավ նշան է:

# Եվրոպոլը Եվրոպայում 380 պայմանավորված խաղ է հայտնաբերել

Եվրոպոլը (Եվրամիության ոստիկանական ծառայություն) 1,5 տարվա հետաքննության արդյունքում հայտնաբերել է վերջին շրջանում անցկացված 380 պայմանավորված ֆուտբոլային հանդիպումներ, որոնցում ներգրավված են եղել 15 երկրների 420 ֆուտբոլիստներ ու պաշտոնատար անձինք: Պայմանավորված խաղերի մեծամասնությունը կազմակերպել է Ասիայում գործող հանցավոր կազմակերպությունը: Պայմանավորված հանդիպումներից ստացված անօրինական գումարների ընդհանուր շրջանառությունը կազմել է մոտ 16 մլն եվրո:

Եվրոպոլի հրապարակած զեկույցում կոնկրետ նշված չեն թիմերի եւ մասնակիցների անունները: Սակայն նշված է, որ պայմանավորված խաղերի թվում են չեմպիոնների լիգայի մրցաշարի 2 հանդիպումներ, աշխարհի եւ Եվրոպայի առաջնությունների ընտրական մրցաշարի մի շարք մրցախաղեր, ինչպես նաեւ եվրոպական ֆուտբոլային առաջատար երկրների առաջնությունների խաղեր:

Հայտնի է դարձել, որ չեմպիոնների լիգայի մրցաշարի պայմանավորված 2 խաղերից մեկը 2009/10-ի մրցաշրջանում տեղի ունեցած «Լիվերպուլ»-«Դեբրեցեն» հանդիպումն է: Խմբային մրցաշարի այդ խաղում հունգարական թիմի դարպասապահ Վուկաշին Պոլեկսիչը ասիական բուքմեյքերական ընկերությունից գումար էր ստացել, որպեսզի 2 եւ ավելի գոլ բաց թողնի: Սակայն նա ընդամենը մեկ անգամ էր գնդակը ցանցից հանել: «Լիվերպուլը» հաղթել էր 1-0 հաշվով:

Նաեւ նշվել է, որ «Ֆիորենտինայի» հետ սեփական հարկի տակ կայացած խաղում «Դեբրեցենի» դարպասապահն անհրաժեշտ արդյունքն ապահովելու նպատակով 4 գոլ է բաց թողել: Ընդ որում բոլոր գոլերը խփվել են առաջին 37 րոպեներին:

Ինչպես հայտարարել է Եվրոպոլի տնօրեն Ռոբ Ուեյնռայտը, իրենք 150 խաղերի վերաբերյալ ապացույցներ ունեն: Գործարքները կատարվել են Սինգապուրում, իսկ մեկ պայմանավորված խաղի համար վճարած գումարը հասել է մինչեւ 100 հազար եվրոյի: Միայն մեկ պայմանավորված խաղում կարող են ներգրավված լինել մինչեւ 50 կասկածյալներ աշխարհի տարբեր 10 երկրներից:

# Բարձր հարկերի պատճառով Բոլտը մրցաշարին չի մասնակցի

**Օլիմպիական խաղերի վեցակի չեմպիոն, արագավազքի աշխարհի բազմակի չեմպիոն Ուսեյն Բոլտը հրաժարվել է մասնակցել հուլիսի 27-ին Լոնդոնի Օլիմպիական մարզադաշտում կայանալիք «Ադամանդե լիգայի» մրցաշարի հերթական փուլին:**

**Լոնդոնի ամառային օլիմպիական խաղերում նշված մարզադաշտում ոսկե 3 մեդալ նվաճած ճամայկացի թեթեւատլետը հայտարարել էր, որ մինչեւ չվերանայվեն Մեծ Բրիտանիայում գործող հարկային դրույքաչափերը, ինքն այդ երկրում որեւէ կոմերցիոն մրցաշարի չի մասնակցի: Բանն այն է, որ մրցաշարին մասնակցելու դեպքում Բոլտը ստիպված կլինի վաստակած գումարի 50 տոկոսը հարկ վճարել:**



# Հաշմանդամ դահուկորդն արծաթե մեդալ նվաճեց

**Ինչպես տեղեկացանք ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունից, հաշմանդամ մարզիկ Սուրեն Բալասանյանը Հարավային Կորեայում անցկացված հատուկ օլիմպիադաների աշխարհի ձմեռային խաղերում արծաթե մեդալ է նվաճել 100 մետր դահուկավազքում:**



**Սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով մարզիկի մասնակցությունը հնարավոր է եղել պետական աջակցության շնորհիվ: Մրցաշարի ընթացքում Սուրեն Բալասանյանին ուղեկցել է «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Արտակ Իսրայելյանը:**

# Աբրահամ-Շտիգլից ռեւանշ-մենամարտը կկայանա մարտի 23-ին

**WBO-ի վարկածով 2-րդ միջինքաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն Արթուր Աբրահամն իր տիտղոսի հերթական պաշտպանությունը կիրականացնի մարտի 23-ին: Այդ օրը նա Մագդեբուրգում կմենամարտի Գերմանիայի դրոշի ներքո հանդես եկող Ռոբերտ Շտիգլիցի հետ, որից ժամանակին խլել էր չեմպիոնական գոտին: Փաստորեն, մարտի 23-ին տեղի կունենա ռեւանշ-մենամարտ:**

**Հիշեցնենք, որ Աբրահամ-Շտիգլից մենամարտը կայացել էր անցյալ տարվա օգոստոսի 25-ին Բեռլինում: 12-ռաունդանոց այդ մենամարտում Արթուր Աբրահամը հաղթելով միավորներով, նվաճել էր աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Իր տիտղոսի առաջին պաշտպանությունն Արթուրը հաջողությամբ իրականացրեց 2012-ի դեկտեմբերի 15-ին՝ 8-րդ ռաունդում տեխնիկական նոկաուտով հաղթելով ֆրանսիացի Մեհդի Բուադլային: Այնպես որ Արթուրը մարտի 23-ին պետք է փորձի 2-րդ անգամ պաշտպանել իրեն պատկանող չեմպիոնական գոտին:**



# 5 հայ շախմատիստներ հետապնդում են առաջատարներին

**Մոսկվայում ընթացող շախմատային փառատոնի 3-րդ տուրում A խմբի մրցաշարի առաջատարներ Հովհաննես Գաբուզյանն ու Հովիկ Հայրապետյանը հաշտություն կնքեցին համապատասխանաբար Նիկիտա Պետրովի եւ Անտոն Դեմչենկոյի հետ: Մեր 2 շախմատիստները 2,5 միավորով հետապնդում են աղյուսակը գլխավորող 8 առաջատարներին, որոնք 3-րդ անընդմեջ հաղթանակները տոնեցին:**

**2,5 միավոր ունի նաեւ Ռոբերտ Աղասարյանը, որը պարտության մատնեց Ալեքսանդր Ռահմանովին: 1,5-ական միավոր ունեն Տիգրան Սիմոնյանը, Դավիթ Շահինյանը եւ Մանուել Պետրոսյանը: 1-ական միավոր են վաստակել Արման Միքայելյանը, Դավիթ Պետրոսյանն ու Դավիթ Գեւորգյանը:**

**Կանանց մրցաշարում հաջող է հանդես գալիս Լիլիթ Գալոյանը, որը սպիտակներով հաղթեց ՖԻԴԵ-ի վարպետ Մայա Տերեշչենկոյին ու վաստակեց 2,5 միավոր: 3-ական միավորով աղյուսակը գլխավորում են 8 շախմատիստուհիներ:**

**C խմբի մրցաշարում հանդես եկող հայաստանցի 5 շախմատիստներից լավագույն արդյունքն ունի Արթուր Ղարագյոզյանը, որը վաստակել է 2,5 միավոր: Արթուրը 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Անատոլի Վինոգրադովի նկատմամբ: Այս մրցաշարում 23 շախմատիստներ 3-ական միավորով գլխավորում են աղյուսակը:**

**10 ուսանող գրոսմայստերների շրջանաձեւ մրցաշարում Ռոբերտ Հովհաննիսյանն անհաջող մեկնարկից հետո առաջին կես միավորը վաստակեց՝ հաշտություն կնքելով Հինդիկ Սետուրամանի հետ: 2,5-ական միավորով առաջատարներն են Ուրի Ելիսեեւը եւ Վլադիմիր Բելոուսը:**

# Բոլորից դիպուկը Վասիլ եւ Գոհար Շահազիզյաններն էին

**58 մարզիկներ մասնակցեցին նետաձգության Հայաստանի առաջնությանը, որն անցկացվեց Էջմիածնում: Տղաների պայքարում լավագույն արդյունքը ցույց տվեց Վասիլ Շահազիզյանը՝ նվաճելով հանրապետության չեմպիոնի տիտղոսը: 2-րդ տեղը գրավեց Արշակ Պետրոսյանը, 3-րդ մրցանակային տեղը բաժին հասավ Վիգեն Սմբատյանին:**

**Աղջիկների պայքարում բոլորից դիպուկը Գոհար Շահազիզյանն էր: Արծաթե եւ բրոնզե մեդալների արժանացան համապատասխանաբար Ռոզա Գրիգորյանն ու Գոհար Հակոբյանը:**

**Ինչպես տեղեկացանք հավաքականի գլխավոր մարզիչ Բորիս Վասիլյանից, Գոհար Շահազիզյանը, Արշակ Պետրոսյանն ու Նունե Վասիլյանը փետրվարի 26-ից մարտի 2-ը կմասնակցեն Լեհաստանի Ժեշով քաղաքում կայանալիք Եվրոպայի ձմեռային առաջնությանը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# SOS. Ադրբեջանում եվրոչինովնիկ է կալանավորվել

ԵԽԽՎ ձմեռային նստաշրջանում «Շտրասսերի զեկույցի» հետ կապված ամոթալի պատմության տպավորությունը, երբ որոշ երկրների խորհրդարանական պատվիրակություններ ամբողջ կազմով «սարի պես» թիկունք կանգնեցին Ադրբեջանի «խավիարային դիվանագիտությանը», դեռեւս օրակարգային է: Մանավանդ՝ Իլհամ Ալիեւի աշխատակազմում հասարակական-քաղաքական հարցերի «կուրատոր» Ալի Հասանովի՝ «Շտրասսերը պետք է ներողություն խնդրի ադրբեջանական ժողովրդից» հոխորտանքի ֆոնին:

Ակնկալելի էր միաժամանակ, որ «պատմական հաղթանակով ոգեւորված» Ադրբեջանում սկսվելու է բռնությունների եւ քաղաքական հետապնդումների նոր ալիք: Հաջորդեցին Իսմայիլիի հայտնի դեպքերը, որոնք ուղղված էին աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարար Ֆիզուլի Ալեքպերովի եւ նրա եղբոր՝ Իսմայիլիի շրջանի գործադիր իշխանության ղեկավար Նիզամի Ալեքպերովի դեմ: Ալեքպերովները, ի դեպ, ծագումով Նախիջեւանից են: Նրանք փաստացի տնօրինում են Իսմայիլիի ողջ շրջանը: Սոցիալական բունտի առիթը տվել էր Ֆիզուլի Ալեքպերովի որդին՝ «Չիրաղ» հյուրանոցի փաստացի սեփականատեր Վուգար Ալեքպերովը, որն անսթափ վիճակում Hummer-ով խոյահարել էր Իսմայիլիի բնակիչներից մեկին (ինքնությունը չի հրապարակում եւ ոչ մի աղբյուր) պատկանած «ՎԱԶ»-ը, ապա ընկերոջ հետ դաժանորեն ծեծել տուժածին, հայհոյել բոլոր իսմայիլիցիներին, նրանց անվանել «անպատիվ ծախվածներ»:

Հաջորդ օրը՝ հունվարի 24-ին, Բաքվից Իսմայիլիի էին մեկնել լրագրողներ, քաղաքական գործիչներ, իրավապաշտպաններ, ինչը միանգամայն բնական է. եթե երկրի մի գավառային քաղաքում հազարավոր մարդիկ անհնազանդություն են հայտնում իշխանություններին, ապա ծագում է իրադարձությունները լուսաբանելու, դիտարկելու կամ պարզապես դրանց ընթացքին հետեւելու խնդիր: Թերեւս այս նկատառումներով է հունվարի 24-ին Իսմայիլի ուղեւորվել «Հանրապետական այլընտրանք» (ReAL) քաղաքացիական շարժման ղեկավար Իլգար Մամեդովը:

Փետրվարի 4-ի հետկեսօրյա ժամերին Մամեդովը հրավիրվել է Ադրբեջանի դատախազություն: Սա՝ պաշտոնապես: Այլ աղբյուրներ պնդում են, որ նա «բերման է ենթարկվել»: Ինչ որ է. մի քանի ժամ տեւած հարցաքննությունից հետո դատախազությունը նրան մեղադրանք է առաջադրել քր. օրհ 133 (հասարակական կարգի խանգարմանն ուղղված գործողությունների կազմակերպում) եւ 315.2 (կյանքին եւ առողջությանը սպառնացող բռնությամբ ոստիկանության ներկայացուցչին դիմադրության ցույց տալու) հոդվածներով: Մամեդովը ոստիկանների հսկողությամբ տարվել է Բաքու քաղաքի Նիզամիի շրջանային դատարան, որը դռնփակ նիստում բավարարել է նրան 2 ամսով կալանքի վերցնելու՝ դատախազության միջնորդությունը:

Սա, ինչ խոսք, Ադրբեջանում քաջածանոթ «ձեռագիր» է: Վարչախումբը նույն «ընթացակարգով» հաշվեհարդար է տեսել շատ ընդդիմախոսների կամ պարզապես իրեն չքծնող հանրային գործիչների, լրագրողների, առանձին քաղաքացիների հանդեպ: Մամեդովի պարագայում, սակայն, իշխանությունների ցինիզմը չափազանց ցցուն է: Բանն այն է, որ «ReAL»-ի ղեկավարը միաժամանակ Եվրոպայի խորհրդի Քաղաքական գիտելիքների Բաքվի դպրոցի տնօրենն է: Այսինքն, ինչպես արդարացիորեն նշել է «Թուրանի» մեկնաբանը՝ «Իլգար Մամեդովը փաստացի Եվրոպայի խորհրդի հաստիքային աշխատակից է»:

Ինչպե՞ս կընդունի Եվրոպայի խորհուրդն իր աշխատակցի կալանավորումը: Իհարկե, կհնչեն «մտահոգություններ», կարվեն հերթապահ հայտարարություններ: Բայց դրանից Ադրբեջանում իրավիճակը կբարելավվի՞: Հազիվ թե: Երբ կոռումպացված վարչախումբը հանրային բողոքի ցույցը իրավապահների «թեթեւ ձեռքով» որակավորում է «հասարակական կարգի խանգարմանն ուղղված գործողությունների կազմակերպում» եւ մեղադրանք առաջադրում Եվրոպայի խորհրդի հաստիքային աշխատակցին, ապա դա արդեն մարտահրավեր է ոչ միայն սեփական, այլ նաեւ միջազգային հանրությանը: Նույն Եվրոպայի խորհրդին, որի պատգամավորին «ադրբեջանական ժողովրդից», փաստացի՝ Իլհամ Ալիեւի վարչախմբից ներողություն խնդրելու սպառնալիք է հնչեցնում ադրբեջանցի պաշտոնյա Ալի Հասանովը:

Հավելենք, որ Իլգար Մամեդովի հետ նույն մեղադրանքներն են առաջադրվել նաեւ «Մուսավաթ» կուսակցության առաջնորդի տեղակալ Յաղուբլիին: Վերջինս նույնպես երկամսյա կալանքի է ենթարկվել:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

# Ինչո՞ւ Սպիտակի երկրաշարժն այդքան կյանք խլեց

Հայկական լեռնաշխարհն ունի միայն մեկ խնդիր՝ երկրաշարժերը, այն էլ նրանցից ունեցած կորուստները ոչ այնքան աղետի, որքան մեր մեղքով են: Բնությունը տարբերաբար տարբեր մեթոդներով «ստուգատեսի» է գալիս. եթե ճիշտ ես արել, շարունակում ես, եթե սխալ ես արել, չես հարգել քո հող ու ջրի օրենքները՝ մտնում ես գերեզման: Մեր տարածաշրջանում բնությունը ստուգայցի է գալիս երկրաշարժերի տեսքով: Օրինակ՝ Սպիտակի երկրաշարժը ցույց տվեց, թե որքան անհարգալից ենք մենք մեր հայրենիքի բնական օրենքների նկատմամբ, դրա համար էլ խստագույնս պատժվեցինք: Երկրաշարժից հետո բոլոր նախախորհրդային, ինչպես նաեւ «ստալինյան» եւ «խրուշչովյան» շինությունները ճաքեր ունեին, բայց կյանքեր էին փրկել, իսկ Կարեն Դեմիրճյանի պաշտոնավարման օրոք կառուցված որեւէ շենք չպահպանվեց, կարծես չէր էլ կառուցվել: Այս մասին իր տեսաբլոգում հայտարարել է Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի նախագահ **Սամվել Կարապետյանը**:

«Սա ցույց է տալիս, որ ազգը այլասերվեց այն աստիճան, որ իր իսկ համար կառուցեց այնպիսի տուն, որը չի դիմանա իր հայրենի բնության ստուգայցերին»,- ասել է Կարապետյանը՝ օրինակ բերելով վերջերս Վանում տեղի ունեցած երկրաշարժը, որն իր ուժգնությամբ չէր զիջում Սպիտակի երկրաշարժին, սակայն ընդամենը 100 մարդու կյանք էր խլել: «Ամոթ է ուղղակի, որ քրդերը մեզանից ավելի են հարգում մեր հայրենիքի կանոնները. Վանում 4 հարկից բարձր որեւէ շենք չես գտնի»...

**Մանրամասները՝ տեսանյութում:**

http://www.youtube.com/watch?v=-Kv–67sicPU

# Համակարգչային «շնիկի» պատմությունը

Նախկինում գրամեքենայի վրա հազվադեպ գործածվող @ նշանագիրն այժմ էլեկտրոնային հաղորդակցության գլխավոր խորհրդանշանն է: Իտալացիներն այս նշանը կոչում են «խխունջ», հոլանդացիները՝ «կապիկի պոչ», իսկ հայերս՝ «շնիկ», ընդօրինակելով ռուսներին:

Օգտվելով «Սմիթսոնիըն» թերթից՝ Կանադայում լույս տեսնող ԹՄՄ «Ապագայ» շաբաթաթերթը նույնպես անդրադարձել է @ նշանագրի գործածության պատմությանը, որը ստորեւ ներկայացնում ենք որոշ կրճատումներով ու փոփոխություններով:



2012-ի դեկտեմբերի 24-ի համարում «Ապագայը» գրում է, որ @-ի գործածության մասին առաջին վկայությունը գտնվել է 1536 թվականին, սակայն ժամանակակից աշխարհ նրա մուտքը եղավ 1971-ին, եւ այժմ @-ը էլեկտրոնային հաղորդակցության հիմքն է ու գործածվում է էլեկտրոնային հասցեներում:

@-ի ծագման մասին նույնիսկ կա խորհրդավոր մի տեսություն, ըստ որի, միջնադարի կրոնավորները երբ ընդօրինակել են ձեռագրերը, փնտրել են սղագրության նշաններ, ինչից դրդված էլ «towards» (դեպի) անգլերեն բառի լատիներեն «ad» տարբերակը վերածել են «a»-ի, իսկ «d» տառը կցել իբրեւ պոչ: Կա նաեւ տեսակետ, թե @-ը, որն անգլերեն կարդացվում է «at» անգլերեն «each at» (յուրաքանչյուրն այնտեղ) բառերի հապավումն է, եւ այս դեպքում «a» տառը ձուլվել է «e» տառին:

Երկար ժամանակ @ նշանը կիրառել են նաեւ առեւտրականները՝ նշելու համար որոշակի քանակությամբ ապրանքների գինը:

Նոր ժամանակներում @-ը իբրեւ խորհրդանշան սկսեց գործածվել 1971-ից, երբ համակարգչային գիտությունների մասնագետ Ռեյ Թոմլինսոնն իր առջեւ խնդիր դրեց միմյանց կապելու մարդկանց, որոնք ծրագրեր էին մշակում համակարգիչների համար: «Փնտրում էի մի տառատեսակ, որը շատ գործածված չլիներ», ասել է **Ռեյ Թոմլինսոնը**, որի ընտրությունը, ի վերջո, կանգ է առել @-ի վրա: Իսկ թե ի՞նչ է գրել էլեկտրոնային առաջին իր նամակում, վերջինս չի հիշում: Սակայն նրա կիրառումից հետո @ նշանը, որը մինչ այդ մատնված էր մոռացության, հետզհետե դարձավ էլեկտրոնային հաղորդակցության խորհրդանիշը:

Ի. Պ.

# Բաքվի «գործակալ»-ության հերթական պահը եկել է

*1-ին էջից*

Քննարկման թեմա է դարձել «Իրանի հասարակական-քաղաքական իրավիճակը, ադրբեջանցիների դրությունը Ռուսաստանում, Վրաստանում, Իրաքում եւ Սիրիայում»: Ինչպես տեսնում ենք, Ռուստամխանլին «ադրբեջանցիներ է հայտնագործել» նաեւ Իրաքում եւ Սիրիայում, ինչը լրացուցիչ մտորումների է մղում: Բայց անցնենք առաջ. Ֆրանկֆուրտի «մեջլիսի» մասնակիցները լրջորեն անդրադարձել են «իրանական ադրբեջանցիների վտարանդի կառավարության եւ խորհրդարանի ստեղծման հարցին, որոշել այդ առնչությամբ շարունակել հանդիպումները իրանական ընդդիմության եւ ազգային փոքրամասնությունների հետ»:

Ռուստամխանլիի հարցազրույցի «աղը» Գյուլիստանի պայմանագրի մասին ասվածն է: Հոկտեմբերին լրանում է պայմանագրի կնքման 200-ամյակը: Եվ ահա «աշխարհի ադրբեջանցիները» որոշել են «տարվա ընթացքում անցկացնել խորհրդաժողովներ՝ կապված այդ պայմանագրի ուժը կորցրած լինելու հետ»: Թե ի՞նչ հիմքով է ադրբեջանցի խորհրդարանականը խոսում երկու պետությունների՝ Իրանի եւ Ռուսաստանի միջեւ կնքված պայմանագրի «ուժը կորցրած լինելու» մասին, երբ ոչ պաշտոնական Թեհրանը, ոչ Մոսկվան այդ մասին չեն խոսում, մնում է միայն ենթադրել:

Առաջին անգամ չէ, որ իրանական Ադրբեջանի խնդրին Բաքուն միջամտում է: Դեռեւս 1918-ին փորձ է արվել «միասնական Ադրբեջան» կազմավորել Թուրքիայի ռազմական միջամտությամբ: Բայց 1-ին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունը, Մուդրոսի պայմանագրով Անդրկովկասից թուրքական զորքերի դուրսբերումը տապալել են ծրագիրը: Երկրորդ նախաձեռնության հեղինակը խորհրդային Ադրբեջանի առաջնորդ Միր-Ջաֆար Բաղիրովն էր, որի ներշնչմամբ ԽՍՀՄ կառավարությունը Իրան մտցրած զորքերի միջոցով Թավրիզում հռչակեց «Ադրբեջանի դեմոկրատական հանրապետություն»: Նպատակը իրանական հյուսիսային տարածքների բռնակցումն էր ԽՍՀՄ-ին: Իրանի ադրբեջանցիների «հեղափոխության» գլխավոր կարգախոսն էր. «Կեցցե բոլոր ադրբեջանցիների հայր Միր-Ջաֆար Բաղիրովը»:

Միայն ԱՄՆ-ի եւ հատկապես Մեծ Բրիտանիայի համառ պնդումների պատճառով էր, որ 1946-ին Ստալինը ստիպված էր օկուպացիոն զորքերը դուրս բերել Իրանի հյուսիսից, եւ «Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությունը» արագորեն փլուզվեց: «Միացյալ Ադրբեջանի» գաղափարը կրկին թարմացավ 1989 թ. դեկտեմբերին, երբ Նախիջեւանի ԻՀ ԳԽ-ն ընդունեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու որոշում, իսկ օրեր անց Ադրբեջանի ժողճակատի գրոհայինները ավերեցին խորհրդա-իրանական սահմանը: Այդ օրը՝ դեկտեմբերի 31-ը, Բաքուն պաշտոնապես հռչակել է «աշխարհի ադրբեջանցիների համերաշխության» տոն:

2011-ի դեկտեմբերի 31-ին Իլհամ Ալիեւը հանդես եկավ ամենամյա ուղերձով, որտեղ իրեն անվանեց «աշխարհի ադրբեջանցիների առաջնորդ»: Իրանական կողմի արձագանքը չափազանց կոշտ էր. խորհրդարանի ազգությամբ ադրբեջանցի երկու պատգամավորներ հայտարարեցին, որ «Իրանի ադրբեջանցիները Իլհամ Ալիեւին առաջնորդ չեն ճանաչում, քանի որ ունեն օրինական առաջնորդ՝ հանձինս այաթոլլա Խամենեի եւ նախագահի»:

Այսօր, ինչպես կարելի է ենթադրել Ռուստամխանլիի համարձակ հայտարարություններից, Բաքվում համոզված են եկել, որ «իրավիճակ է փոխվում»: Դա, ամենայն հավանականությամբ, կապված է Իրանի հանդեպ Արեւմուտքի կամ Իսրայելի կողմից ենթադրվող ռազմական գործողությունների մասին Ադրբեջանի իշխող վարչախմբի պատկերացումների հետ: Բացառված չէ, որ Իլհամ Ալիեւի վարչախումբը «կամավորագրվում է» Իրանում իրավիճակի ապակայունացնողի դերին: Այն է՝ նման քայլերով Իրանում սադրել «ազգային-ազատագրական շարժում»՝ ակնկալելով, որ պաշտոնական Թեհրանի արձագանքը կլինի «ոչ համաչափ», կկիրառվի ուժ, ինչն էլ իր հերթին թույլ կտա, որ Արեւմուտքը միջամտի այդ երկրի ներքին գործերին՝ «մարդու հիմնարար իրավունքների եւ ազատությունների պաշտպանությամբ մտահոգվածության» ծածկաքողի տակ:

Այսպիսով, ոչ ավելի, քան 100 տարվա ընթացքում Բաքվի իշխանությունները երրորդ անգամ «գործակալի» դերակատարություն են վերցնում իրենց վրա եւ թշնամական քայլեր ձեռնարկում հարեւան դավանակից երկրի հանդեպ: Մնում է սպասել իրանական կողմի արձագանքին: Իսկ «Աշխարհի ադրբեջանցիների կոնգրեսի» վարչության հաջորդ նիստը նախատեսվում է գումարել առաջիկա հունիսին՝ Վրաստանում: Այդպես է կանխածրագրել Սաբիր Ռուստամխանլիի «գրասենյակը»: Բայց կարտոնե՞ն վրացական իշխանությունները, որպեսզի իրենց երկիրը դառնա հակաիրանական, ինչու չէ՝ նաեւ ոչ վրաստանանպաստ միջոցառման մասնակիցների հավաքատեղի՝ ցույց կտա ժամանակը:




ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 5.2.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: